



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3759

Տ.ԽԱՐԱԽԱՇՅԱՆ

ՄԵԾ

Համալսարանական

ԻՆՏԵՆՏ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՌԵՍՊԱԲԼԻԿԱՆ
ԲԻՅՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՏ
ՍՍՍՐ

Տ Ա Ր Ի Ն

ԽԱՆԺՈՂՈՎ ԿԵՆՏՐՈՆԱՐԱՎԵՌԻԲՈՒ
ՄՈՍԿՎԱ 1931 ՌՈՍՏՈՎ-ԴՆՆ

372 40) 1917"

14-35

189 AUG 20 1916 32-1

24 JAN 2006

S. lu.

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՏԱՐԻՆ


(Հոկտեմբերի 14-րդ արեգաճի արքիվ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Линдскай Хаус
СССР

1. ՍՈՑԻԱԼԻՋԻՄԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ Ե

Լրանում է Հոկտեմբերյան Հեղափոխության 14-րդ օրին: Այդ 14 օրին պրոլետարիատի լարված դասակարգային պայքարի և այդ պայքարում տարած խոշորագույն հաղթանակների տարիներ են: Հաղթահարելով ռազմական ճակատներում իր դասակարգային թշնամուն, բանվոր դասակարգն աշխատավոր մասսաների հետ միասին լեհիստանյան կուսակցության ղեկավարությամբ նոր ու նոր հաղթանակներ է տանում սոցիալիզմի կառուցման ճակատում: Յուրաքանչյուր օրին, պրոլետարիատի յուրաքանչյուր քայլը ղեկի սոցիալիզմ կապիտալիստական «բռնապետների» և «քաղաքագետների» կողմից և նրանց աջակից սոցիալ-ֆաշիստների, ապա նաև աջ ու ձախ» ոպորտունիստների կողմից թերահավատ, հեղնական «նախագուշակումներով» և ուղեկցվել այն մասին, վոր ի վերջո սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում անհնարին է, վոր խորհրդային իշխանությունը գլորվում է ղեկի իր կործանումը,

վոր կուսակցութեան գլխավոր գիծը ճիշտ չե և այլն: Ավելին՝ այդ պարոններն իրենց ուշփերի ներածին չափ խանգարում էին մեր յերկրի արագընթաց սոցիալիստական առաջխաղացման: Սակայն պրոլետարիատը հաղթահարելով բոլոր արգելքները, հաղթանակ հաղթանակի հետևից տանելով, արդեն այս տարի ավարտում է սոցիալիզմի հիմքի կառուցումը: Նա ամենակարճ ժամանակամիջոցում վերականգնեց պատերազմից հետո քայքայման վերջին աստիճանին հասած տնտեսութունը, ապա սոցիալիստական շինարարութեան հնգամյա պլանը կազմելով, բուն թափով առաջ տարավ սոցիալիզմի կառուցումը, հարձակման անցնելով կապիտալիստական տարրերի վրա արդեն ծավալված ֆրոնտով: Առանձնապես ծաղրանքի, հեղնանքի, քննադատութեան և հարձակման յենթարկվեց մեր հնգամյա պլանը: Նրա շուրջը ծավալվեց սուր պայքար, վորովհետև հնգամյակը մահացու հարվածներ եր հասցնում կապիտալիզմին մեր յերկրում և ապա թուլացնում միջազգային կապիտալիզմի դիրքերը: Միջազգային բուրժուազիան մեր հնգամյակը, նրա նախատեսած տեմպերը «բոլշևիկյան ֆանտազիա» յեր համարում, վորն անհնարին է իրագործել: Սակայն իրականութունը յեկավ անողոք կերպով հուսախաբելու միջազգային բուրժուազիային: և նրա ազենտուրային: Մեր հնգամյակը վոչ միայն կատարվում է, այլ և գերակատարվում է: Հնգամյակը, մեր յերկրի սոցիալիստական ինդուստրացման այդ պլանը—մենք կատարում ենք 4 տարում: Մենք հնգամյակի յերկրորդ տարում արդեն վոտք դրինք սոցիալիզմի շրջանը, իսկ յերրորդ տարում ավարտում ենք սոցիալիզմի հիմքի կառուցումը: Իրար հետևից սկսում են աշխատել մեր նոր հսկա գործարանները, զինված ամենաբարձր տեխնիկայով, հիմնովին վերակառուցվում է գյուղական տնտեսու-



60911-67

թյունը սոցիալիստական հիմունքներով, արմատախիլ են արվում կապիտալիզմի մնացորդները մեր յերկրում: Սակայն պատմութեան անողոք անիմը այնպես շուտ յեկավ, վոր վոչ միայն տապալեց բուրժուազիայի և ոպորտունիստների «նախագուշակումները» հնգամյակի և ԽՍՀՄ-ի ապագայի վերաբերմամբ, այլ և իր մյուս ծայրով, հակառակ մեր սոցիալիստական վերելքին—կրիզիսի անդունդը նետեց, առանց այն ել խարխուլ կապիտալիստական տնտեսութունը: Համաշխարհային տնտեսական կրիզիսի կողքին, ավելի ևս ցայտուն կերպով են տպավորվում սոցիալիզմի հաղթանակները մեր յերկրում: Սյոժավելի, քան յերբևիցե, բացահայտ կերպով հայտնաբերվում են սոցիալիստական սիստեմի առավելութունները հանդեպ կապիտալիստականին: Յեկ այսոր, Հոկտեմբերյան Մեծ հեղափոխութեան նախորդակին տեղին է համեմատելով, կողք կողքի դնելով յերկու համաշխարհային, իրար հակառակ սիստեմները—սոցիալիստականը և կապիտալիստականը, ցույց տալ առաջինի կենսունակութունն ու բուն աճումը և յերկրորդի կազմալուծումը ու անհապաղ անկումը: Այդպիսի համեմատութուն արեց դեռ ընկ. Ստալինը 16-րդ համադումարում, ասելով, վոր «Մեզ մոտ, ԽՍՀՄ-ի մեջ, սոցիալիստական շինարարւթյան անող վերելքն է յե՛վ արդունաբերւթյան յե՛վ գյուղատնտեսւթյան մեջ: Նրանց, կապիտալիստների մոտ տնտեսւթյան անող կրիզիսն է յե՛վ արդունաբերւթյան մեջ յե՛վ գյուղատնտեսւթյան մեջ»: 16-րդ համադումարից հետո անցած շրջանն ավելի ևս ցայտուն կերպով հաստատեց ընկ. Ստալինի այդ խոսքերը: Կապիտալիզմի համաշխարհային տնտեսական կրիզիսն ավելի ևս խորացավ, իսկ նույն ժամանակվա ընթացքում սոցիալիզմը մեր յերկրում ավելի ևս խոշոր հաղթանակներ ունեցավ:

2. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԽԵՂԴՎՈՒՄ Ե ԿՐԻՋԻՍԻ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

Արդեն յերկու տարի յե, ինչ վոր ամբողջ կապիտալիստական աշխարհն ընդհանուր տնտեսական կրիզիսի տարերային հոսանքի մեջ ընկած, շղաձիղ ցնցումների յե յինթարկվում: Կապիտալիստական կրիզիսներն առնասարակ նոր յերևույթ չեն: Կրիզիսները կապիտալիզմի մշտական ուղեկիցներն են յեղել: Նրանք առաջանում են կապիտալիզմին հատուկ ներհակություններէց: Այդ առթիվ ընկեր Ստալինը 16-րդ համադումարում ասում է հետևյալը.

«Գերարտադրության տնտեսական կրիզիսների հիմքը, նրանց պատճառը պարունակվում է նենց իր, կապիտալիստական տնտեսության սիստեմի մեջ: Կրիզիսի հիմքը կայանում է արտադրության համայնական ընույթի և արտադրության առդյունքների յուրացման կապիտալիստական ձևի միջև յեղած հակասության մեջ: Կապիտալիզմի այդ հիմնական հակասության արտահայտությունն է հանդիսանում կապիտալիզմի արտադրական հնարավորությունների խոշորագույն աճման, վորն ուղղված է մաքսիմում կապիտալիստական շահ ստանալուն և աշխատավորների միլիոնավոր մասսաների կողմից վճարունակ պահանջի համեմատական կրնասման միջև յեղած հակասության մեջ... Կոնկուրենցիայում տանելու և ավելի շատ շահ քամելու համար կապիտալիստներն ստիպված են դարգացնել տեխնիկան, ռացիոնալիզացիան անցկացնել, ուժեղացնել բանվորների շահագործումը և բարձրացնել իրենց գործարանների արտադրության հնարավորությունները վերջին աստիճանին... Սակայն ներքին շուկան և ար-

տաքին շուկան, բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաների, վորոնք վերջին հաշվով հիմնական գնորդներն են, գնելու ունակությունը մնում է ցածր մակարդակի վրա: Այստեղից՝ գերարտադրության կրիզիսները... գերարտադրության կրիզիսն այդ հակասության արտահայտությունն է բունն և ավելի ձևերով»:

Ահա վորտեղից են բղխում կապիտալիստական կրիզիսները: Այս լենինյան-մարքսիստական հիմնավորումը, վոր տվեց ընկեր Ստալինը, լիովին վերաբերվում է նաև ներկայիս տնտեսական կրիզիսին: Սակայն դրա հետ միասին ընկ. Ստալինը, վերլուծելով ներկայիս տնտեսական կրիզիսը, շեշտում է նրա մի շարք առանձնահատկությունները և առաջին հերթին այն, վոր այս կրիզիսն ընդհանուր, համաշխարհային բնույթ է ստացել: Նա ծավալվում է վոչ միայն մեկ կամ մի քանի կապիտալիստական յերկրներում, այլ ամբողջ աշխարհում: Տնտեսական համաշխարհային կրիզիսն ընդհանուր է նաև այն պատճառով, վոր նա ընդգրկում է վոչ միայն արտադրությունը, այլև գյուղատնտեսությունը, վոր արդյունաբերական կրիզիսը սերտորեն շղկապում է գյուղատնտեսականի հետ, ձգձգելով մեկը մյուսին և այդպիսով խորացնելով ամբողջ տնտեսական կրիզիսը: Կրիզիսի ընդհանուր բնույթն ավելի ևս պարզվեց վերջին տարվա ընթացքում, յերբ կրիզիսն սկսվեց, ավելի ճիշտ ծավալվեց, նաև ֆինանսների ասպարեկում, պայթեցնելով կապիտալիզմի ֆինանսական այնպիսի ամրոցն, ինչպիսին համարվում եր անգլիական ֆունտը, սպառնալով նաև ամերիկական դոլլարին և այլն: Կրիզիսն ընդգրկել է ամբողջ աշխարհը բառիս բուն իմաստով, բացի ԽՍՀՄ-ից: Նա վարակել է կապիտալիստական տնտեսության բոլոր ձյուղերը:

Ա. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՐԻՉԻՍԸ

Արդյունաբերական ամբողջ շրջաններ շտապուցիչ արագավորություն են թողնում իրենց մեռելային լուծյամբ և անշարժությամբ: Յեւ ղեռ որեցոր կրճատվում և գործող գործարանների թիվը, կրճատվում և արդյունաբերական արտադրությունը: Ներքև բերված թվերը կարող են բնորոշել այդ կրճատման ընթացքը և չափերը, Կրիզիսը հարվածեց կապիտալիստական ամենախոշոր յերկիրը, ՀԱՄՆ. ներկայումս Մ.Նահանգների արդյունաբերությունը հետևյալ պատկերն է ներկայացնում. 1931 թվի յոթ ամսվա ընթացքում ածուխի արտադրությունը 24% -ով պակաս է 1929 թվի նույն ժամանակվա ընթացքում արտադրված ածուխից: 1931 թվի ութ ամսվա ընթացքում չուգունի արտադրանքը կրճատված է 1929 թվի նույն շրջանի հետ համեմատած՝ 53% -ով (15,575 հազար տոննով), իսկ պողպատի արտադրանքը կրճատված է 51 տոկոսով (20.280 հազար տոննով): Նավթի արտադրությունն այս տարվա առաջին կիսամյակում կրճատված է 13 տոկոսով, սակայն նավթարդյունաբերությունն ավելի ևս խոշոր կորուստներ ունի զբների անկումից: Վերջապես, Ամերիկայի ավտոմոբիլային արդյունաբերության արտադրությունն այս տարի կազմում է 1929 թվի կեսը: Արդյունաբերության վերոհիշյալ ճյուղերը վճռական նշանակություն ունեն արդյունաբերության մյուս ճյուղերի համար: Յեթե այստեղ կրիզիսն այսպիսի անմխիթար պատկեր է ներկայացնում, ապա մյուս ճյուղերն ևս առավել խեղդվում են կրիզիսի ողակումից:

Մի քանի տվյալներ գերմանական արդյունաբերության մասին: Գերմանիան, Վերսալի պայմանագրով, ապա Դաուեսի և Յունզի պլաններով ողակված, ավելի քան ցայ-

սուն կերպով հայտնաբերում է նախընթաց կապիտալիստական «ստաբիլիզացիայի» չափազանց խարխուլ լինելը:

Գերմանիայի ծանր արդյունաբերության արտադրանքը հետևյալ պատկերն է տալիս.—

1930 թ. ածուխի արտադրությունը կրճատվել է համեմատած 1929 թվի հետ 13 տոկոսով, չուգունի արտադրանքը—31 տոկոսով և պողպատինը 31 տոկոսով: 1931 թ. ութ ամսվա ընթացքում կրճատված է ածուխի արտադրությունը 45 տոկոսով, չուգունինը—50 տոկոսով և պողպատինը 45 տոկոսով, համեմատած 1929 թվի նույն ժամանակաշրջանի հետ:

Անգլիայում 1930 թվին ածուխի արտադրանքը կրճատվել է 5 տոկոսով, չուգունի—18 տոկոսով և պողպատինը—24,5 տոկոսով, 1929 թվի հետ համեմատած: 1931 թվի յոթ ամսվա ընթացքում, 1929 թվի նույն շրջանի հետ համեմատած, ածուխի արտադրանքը կրճատվել է 13 տոկոսով, չուգունի—48 տոկոսով և պողպատինը—46 տոկոսով: Պետք է հիշել, վոր Անգլիայում ավելի ուշ սկսվեց արդյունաբերական կրիզիսը, քան Գերմանիայում:

Ֆրանսիայում կրիզիսն ամենից ուշ սկսվեց: Ֆրանսիան սկզբում իրեն ապահովված էր համարում կրիզիսից, բայց շուտով այնտեղ էլ յերևացին արդյունաբերական կրիզիսի նշույլները, իսկ 1931 թվին նա յեւ արդեն ընկավ կրիզիսի այնպիսի զիրկը: Այն փաստը, վոր Ֆրանսիան ավելի «դիմացկուն» հանդիսացավ կրիզիսի դեմ, բացատրվում է նրանով, վոր Ֆրանսիան Գերմանիայի վերաբերմամբ հաղթանակող պետություն էր և վերջինիս հաշվին վոսկով էր առաջնորդում իր բանկերի ներքնահարկերը: Իսկ Անգլիայի և Ֆրանսիայի մեջ յեղած տարբերությունը կրիզիսի ծավալման տեսակետից ցույց է տալիս, վոր Անգլիան հետզհետե

նահանջում է իր համաշխարհային դիրքերից: Կրիզիսի Անգլիային ավելի ուժեղ հարվածներ հասցնելու միջ պետք է նկատել նրա իմպերիալիստական հզորութեան նվազումը:

Բ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻՉԻՍԸ

Վերոհիշյալ տվյալներից մենք տեսանք, վոր արդյունաբերական կրիզիսը վոչ միայն չի թուլանում, այլ ընդհակառակն, ավելի ևս խորանում ու զարգանում է: Նա դեռ չի հասել իր խորութեան գագաթնակետին: Արդյունաբերության կրիզիսի խորութեան և նրա ձգձգման նպաստող պայմաններից մեկն է նաև գյուղատնտեսական կրիզիսը: Մենք վերև առիթ ունեցանք հիշելու այդ մասին, վորով ընտրողում է տնտեսական կրիզիսի ընդհանուր լինելը: Այդ առթիվ ընկ. Ստալինն ասում է հետևյալը.—

«Տնտեսական կրիզիսի ծավալման ընթացքում արդյունաբերական կրիզիսը վոչ միայն պարզապես զուգահիսպեց, այլ շաղկապվեց ագրարային յեղիքների գյուղատնտեսական կրիզիսի նե՛ս, խորացնելով դժվարություններ յեվ նախորոշելով սրնտեսական ակտիվության ընդհանուր անկման անխուսափելիությունը: Ավելորդ է ասելն անգամ, վոր արդյունաբերական կրիզիսը պե՛տ է ուժեղացնի գյուղատնտեսականը, իսկ գյուղատնտեսականը—պի՛տի ձգձգի արդյունաբերականը, վոր չի կարող չսանել դեպի ամբողջ տնտեսական կրիզիսի խորացումը» (Կենտկոմի հաշվետու ղեկուցումից 16-րդ համագումարում):

Իսկ գյուղատնտեսական կրիզիսը, վոր վաղուց է արվեն ջղաձգում է կապիտալիստական աշխարհը և ժանապանդ ագրարային յեղիքները, դեռ ևս շարունակում է ամենայն ուժով ծավալվել: Մի քանի տվյալներ միայն ար-

վեն բավականաչափ ընտրողում են գյուղատնտեսական կրիզիսի թափը: Հետևյալ թվերը ցույց են տալիս, թե վորքան է յեղել կարևորագույն գյուղատնտեսական մթերքների պաշարն ամբողջ աշխարհում: (Հաղարավոր տոններով):

Թվականները	Ցորեն	Բամբակ	Կոֆե	Կաուչուկ
1925	3.400	1.609	573	152
1929	11.400	1.837	1.407	313
1930	12.000	2.245	1.664	454

Ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսական պաշարը, վորը չի գտնում իր զնորդին շուկայում, տարեցտարի հակայական չափերով աճում է: Սա արդյունք է նույն աշխատավոր ժասանների պահանջի կրճատման, վորը հետևանք է նրանց տնտեսական դրութեան վատթարացման: Գյուղատնտեսական ապրանքների այսպիսի գերաբարձրութունը պարզ է, վոր չափազանց իջեցնում է նրանց գները, վոր յերևում է հետևյալ տվյալներից: (Գների առաջին շարքը ցույց է տալիս միևնույն տարվա ամենացածր գները, յերկրորդ շարքը—նույն տարվա ամենաբարձր գները):

Թվականները	Ցորենի գները	Հաճարի գինը	Բամբակի գինը	Բուրդի գինը	Շաքարի գինը
1925 թ.	135—245	121—222	142—205	147—240	106—159
1930 թ.	58—165	55—161	71—113	68—115	54—85
1931 թ.	59—7	51—68	45—86	66—82	51—61

Գյուղատնտեսական մթերքների գների այսպիսի անլուր անկումը քայքայման վերջին աստիճանին է հասցնում մանր

գյուղացիական տնտեսութունները: Բացի դրանից, գյուղացիութունն անազին կորուստներ ունի նաև արդյունաբերական ապրանքների համեմատաբար ավելի բարձր լինելուց, քան գյուղատնտեսական ապրանքների գները: Արդյունաբերական գները, չնայած գերարտադրության կրիզիսին, համեմատաբար ավելի բարձր են գյուղատնտեսական գներին, վորովհետև այստեղ խոշոր չափով ազդում են մոնոպոլիաները, վորոնք շնորհիվ իրենց ուժին և մոնոպոլիստական դրուժյան, ձգտում են չնայած գերարտադրության, գները վորոջ բարձրության վրա պահել: Իսկ գյուղացին դրանից անազին չափով տուժում է, վորովհետև գյուղատնտեսութան ապրանքների գներն այդպիսի պատենչ չունենալով, գլորվում են ցածր: Ամերիկայում, որինակ, մի բուշել ցորենի գնով (40-50 կոպ.) կարելի յե գնել միայն մի տուփ եժանազին ծխախոտ:

Այսպիսի պայմաններում լավ բերքը, լայնատարած ցանքսերը կապիտալիզմի համար խոշորագույն դժբախտութուն են: Միացալ նահանգներում այս տարի բամբակի լավ բերքն ավելի ևս ավելացրեց բամբակի չսպառված պաշարը և հետևաբար նորից իջեցրեց գները: Նույնպիսի դրուժյուն է ստեղծվում նաև ուրիշ գյուղատնտեսական մթերքների հետ: Որինակ, Դանիայի կարագի գինը 1931 թ. հունվարից մինչև հուլիս ընկել է 40 տոկոսով, խոզի մսի գինը 46 տոկ., ձուր գինը 57 տոկոսով և այլն: Գների անկման պատճառով ֆերմերները (գյուղացիները) չեն կարողանում վճարել տուրքերն ու պարտքերը և նրանց տնտեսութուններն աճուրդով ծախվում են:

Կապիտալիստները, վորոնց ձեռքին են կենտրոնացված մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքների պաշարները, գները բարձրացնելու, իրենց շահույթը փրկելու յեղք

փնտրելով, գտնում են այդպիսին միայն նրանում, վոր ագիտացիա յեն մղում կրճատել ցանքսերը, վոչնչացնել բերքի մի մասը, վոչնչացնել ապրանքների խոշոր պաշարները և այլն: Անցած տարի Բրազիլիայում 2 միլիոն տոպրակ կոֆե ծովը նետեցին, իսկ այս տարի այրված է 72 միլիոն կիլոգրամ կոֆե: Ցորենի մի տոննը յերկու անգամ ավելի եժան է, քան թե աժուխի մի տոննը: Այդ պատճառով աժուխի փոխարեն առայժմ Ամերիկայում ցորեն են այրում: Նույն Ամերիկայի հողագործության մինիստրն առաջարկել է բոլոր ֆերմերներին (գյուղացիներին), վոչնչացնել բամբակի բերքի մեկ յերրորդ մասը: Կան մարդիկ էլ, վոր պահանջում են բամբակ ցանելու մի տարով բոլորովին արգելել: Յեթե մեկը միայն մեր յերկրում համարձակվեր վերոհիշալ միջոցներեց մեկն ու մեկը առաջադրել, նա ամբողջ մեր Միության ծաղրի ու ծանակի առարկա կդառնար: Նրան խելագար կհամարեյին: Սակայն կապիտալիստական յերկրներում դա սովորական է արդեն— վոչնչացնել, քայքայել... Դա յե այժմ կապիտալիզմի բնորոշ դիժը:

Չե՞ վոր կապիտալիզմը ինքնին արդեն քայքայվող, նեխվող սխտեմ է: Սակայն ի՞նչ է նստում դա աշխատավորության համար, մենք կտեսնենք ներքև:

Գ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԻՉԻՍ

«Ներկայիս տնտեսական կրիզիսն—ասում էր ընկ. Ստալինը դեռ 16 համազումարում—մինչև այժմ յեղած համաշխարհային տնտեսական կրիզիսներից ամենախոր և ամենաուրջ կրիզիսն է հանդիսանում»: Յեզ իրոք, 16-րդ համազումարից հետո, յերբ այդ բնորոշումը տվեց ընկ. Ստալինը, արդեն անցել է մի տարուց ավելի և կրիզիսաը վոչ միայն

չի փափկացել, այլ դեռ ևս չի հասել իր խորութեան գագաթնակետին: Կրիզիսը դեռ ևս շարունակվում է ծավալվելով ընդգրկելով ամբողջ կապիտալիստական աշխարհը, տարածելով իր քայքայիչ ազդեցութունը կապիտալիստական տրնտեսական որգանիզմի նոր ու նոր մասերի վրա: Վերջին ամիսների ընթացքում անտեսական կրիզիսի մեջ մենք նկատում ենք նոր յերևույթներ: Դա այժմ արդեն ծավալվող և սուր կերպարանք ստացած ֆինանսական ու վարկային կրիզիսն է, վոր հետզհետե ողակավորում է բոլոր կապիտալիստական յերկրները:

Հայտնի յե, վոր արդյունաբերական կրիզիսի ծավալման հետ է կապված բորսայի կրիզիսը, այսինքն ակցիաների կուրսի անկումը:

Ակցիաների գներն այս տարի ընկել են արդեն, 1929թվի հետ համեմատած Նյու-Յորքի բորսայում 60 տոկ, Լոնդոնում 60 տոկոսով, Բեռլինում 71 տոկոսով և այլն: Անկցիաների անկումը քայքայման հասցրեց մանր բուրժուաներին, վորոնք ակցիաների տերերի հիմնական մասսան են կազմում: Բնական է, վոր սկսվեց կապիտալների «փախուստը» բանկերից և ակցիոներ կամպանիաներից և վոր միայն յերկրիներսում, այլ և յերկրից դուրս ել: Կապիտալներն սկսեցին հանվել ոտար յերկրներից և ներմուծվել սեփական յերկրները կամ տեղափոխվել ավելի ապահով յերկրներ: Այս բոլոր յերևույթներն առաջ բերին կամ ավելի ճիշտ ուժեղացրին ֆինանսական և վարկային կրիզիսը: Դա յերևում է սնանկացումների աճումից, վոր տեղի ունի ներկայումս կապիտալիստական բոլոր յերկրներում: Կապիտալների և վոսկու փախուստը բանկերից և յերկրից դուրս պատճառ են դառնում նաև բյուջետային կրիզիսին, վորի մեջ ընկան մի շարք պետութուններ և վորի ճամփին են արդեն մնացածները:

Սկզբում վարկային կրիզիսը հարվածեց Ավստրիային և Գերմանիային: Յեվ սա հասկանալի պատճառներով, վորովհետև այդ յերկրները կապիտալիստական ֆինանսական և վարկային սիստեմի ամենաթույլ ողակն են: Այս հանգամանքը վորոշ հույս եր ներշնչում համաշխարհային կապիտալիզմին, վոր ֆինանսական կրիզիսն այդ յերկրներից դուրս չէ տարածվի: Սակայն շուտով ֆինանսական և վարկային կրիզիսը սկսեց կայծակի արագութեամբ և ույժով հարվածել նաև մնացած կապիտալիստական մեծ ու փոքր յերկրները:

«Մեծն Բրիտանիայի» «նորին արքայական» կառավարութունը շուտով ստիպված եր իր բյուջետային ծակերը ծածկելու համար, դիմել «վճռական» միջոցների—կրճատելու բանակի և վոստրիկանութեան ոռճիկները և, գլխավորապես, կրճատելու գործազուրկների առանց այն ել չնչին ոժանդակութունը:

Նույն ֆինանսական և վարկային կրիզիսի ազդեցութեան տակ, ճգնելով պահպանելու բանկերի և պետութեան վոսկե պահեստները (իսկ նրանք վերջերս սկսել էին «հալչել» Անգլիայից դուրս հոսել), անգլիական կառավարութունը բացարձակապես հայտարարեց վոսկե ստանդարտի վերացման մասին, վորից հետո պարզ բան է, սկսվեց մինչև այդ անխախտ ֆունտ-ստերլինգի կոտորն ընկնելը, հասնելով մինչև 15-16 շիլինգի: Անգլիական իմպերիալիզմի և նրա բանկերի հետ կապված համարյա բոլոր յերկրներն ևս ընկան նույն վարկային և ֆինանսական կրիզիսի մրրկի մեջ: Մինչև վերջին որերս Ֆրանսիան և Հ.Ա. Միացյալ Նահանգներն ըստ յերևույթին վարկային և ֆինանսական կրիզիսին չեյին յենթարկված: Սակայն, ավազ, նրանց ևս հասավ կրիզիսի այդ նոր ալիքը: Թերթերը մեզ ոք որի վրա ավելի ու ավելի համառորեն լուրեր են բերում, վոր Ամերիկայից վոսկին

տասնյակ շոգենավերով «փախչում եմ» դեպի Ֆրանսիա, վոր Ֆրանսիայի և Ամերիկայի բանկերում ներդրված կապիտալների տերերը դուրս են բերում այնտեղից իրենց գումարները, վոսկով ստանում և պահ տալիս: Մնանկութեան ու սովի ահը սարածվել է ամբողջ աշխարհում և ամբողջ կապիտալիստական աշխարհը խառնաշփոթի յե յենթարկված: Յուրաքանչյուր վոք խուճապի յենթարկված, յելք է փնտրում իր կապիտալները և հարստութունը փրկելու համար: Ամբողջ պետութուններ ֆինանսական սնանկութեան են մատնված, վորոնց բյուջեները պայթում են սպանի պղպձակների նման: Որինակ, Բրազիլիան սեպտեմբեր ամսում հայտարարեց, վոր դադարում է վորեւէ վճարումներ կատարել իր պարտքերի հաշվին:

Հուլի և Լավալ, Բրյուսելինգ և Մակդոնայլը, այլ և այլ մեծ ու վոքք կապիտալիստները և նրանց լակեյները, իրաբանցման մեջ են, ճիգ թափելով յելք գտնելու ֆինանսական կրիզիսի ստեղծած հսկայական անդունդից, թղթե արգելքներ կառուցելով նրա հետագա բուռն դարգացման հանդեպ: Սակայն քանի վոր խորանում է տնտեսական և մանավանդ արդյունաբերական կրիզիսը, ապա նրա հետ միասին ժամանակակից մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում կրիզիսի զարգացման վորոշ աստիճանի վրա անհապաղորեն պիտի ժայթքեր վարկային ֆինանսական կրիզիսն իր ավերիչ հետևանքներով: Ներկա կրիզիսի սկզբնական շրջանում բորսային կրիզիսները, արդյունաբերական արտադրութեան կոծատումը, առևտրի կրճատումը հետ է մղում կարճատեղ վարկերը, շղջանալութունից դուրս բերելով այդ խտով կապիտալները: Այդ շրջանում դրամական կապիտալների առատութուն է լինում, վորով ոգտվում են բանկերն առժամանակ իրար ձեռք բռնելու, արվեստորեն պահպանելու և

գժվարութուններից դուրս բերելու խոշոր կոնցերնները: Այդ շրջանում վարկային կրիզիսից տուժում են միայն մանր ու միջին գործարաններն ու բանկերը: Սակայն արդյունաբերական կրիզիսը ձգձգվում և խորանում էր: Ապրանքները չեյին ծախվում, մոնոպոլիստական կազմակերպութունները գները չեյին իջեցնում, վորը իր հերթին ձգձգում ու խորացնում է կրիզիսը, մասսաների վճարունակութունը կրճատվում էր, այս բոլորը ավելի ևս սրում էյին կրիզիսում արտահայտվող հակասութունները: Արդյունաբերութեան մեջ տիրող այս դրութունը, վոր «մեռցնում էր» կապիտալները ապրանքների մեջ և շահույթն ընկնում, բանկերի կրոսձ վնասներն առաջ բերին հավատարմութեան կրիզիս և ներդրումների բանկերից դուրս բերելը մասսայական չափերով: Այժմ արդեն սուր կերպով զգացվում է կապիտալների և վարկերի պակասութուն, վորի անունն է վարկային կրիզիս: Սրա վրա յե հիմնված նաև կապիտալների դուրս հոսելը գանազան յերկրներից: Այստեղ է թագնված նաև բյուջետային կրիզիսը, վորը հետևանք է պետական յեկամուտների կրճատման շնորհիվ տնտեսական կրիզիսի խորացման:

Ֆինանսական և վարկային կրիզիսներն իրենց հերթին ավելի ևս սրում են արդյունաբերական և գյուղատնտեսական կրիզիսը: Արդյունաբերական կոնցերնների և խոշոր բանկերի անանկացումներն որ որի վրա աճում են: Հունիս-հուլիս ամիսներին ընթացքում միայն Գերմանիայում տեղի յե ունեցել 116 սնանկացում մետաղարդյունաբերութեան մեջ, 112 ելեկտրոարդյունաբերութուն մեջ, 135 շինարարական արդյունաբերութեան մեջ, 108-սնունդ արտադրող արդյունաբերութեան մեջ և այլն:


Իսկ կրիզիսի սկզբից սնանկացումները հետևյալ ընթացքն ունեն: Միացյալ Նահանգներում 1929 թվին սնանկացել են

642 բանկ, 1930 թվին—1345 բանկ, իսկ 1931 թվի ութ ամսվա ընթացքում—1098: Սեպտեմբեր ամսում անանկացավ խոշորագույն ամիրիկական կամպանիան—«Տրանսամերիկա կորպորեյշն», վորը հսկում էր 20 բանկերի վրա, մի շարք նավթային ավտոմոբիլային և այլ արդյունաբերական ձեռնարկների վրա, ինչպես Մ.միրիկայում, նույնպես և Անգլիայում, Հարավ-Սլավիայում, Բուլղարիայում և Ռումինիայում, 3¹/₂ միլիարդ դոլար ընդհանուր կապիտալով:

**Դ. ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՈՒՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՏԹԱՐԱՆՈՒՄ Ե**

Ահա, համառոտ կերպով, ինչ է ներկայացնում իրենից կապիտալիստական տնտեսությունը ներկայումս: Արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների պաշարներն աճում են, սակայն վճարունակ պահանջը շուկայում կրճատվում է, քանի վոր ավիանում է գործազուրկների թիվը, կրճատվում է աշխատող բանվորների աշխատավարձը, քանի վոր տասնյակ միլիոնավոր մասսաները նետված են սովի ճիրանները: Կապիտալիստական ընդհանուր կրիզիսի բալանսն այդ է՛ մի կողմից ապրանքների հսկայական մասսաներ, մյուս կողմից գործազրկություն, սովամահի մատնված միլիոնավոր բանվորներ և գյուղացիներ: Գործազուրկ բանվորների թիվը բոլոր կապիտալիստական յերկրներում հասնում է արդեն մոտ 40 միլիոնի, ապա հաշվեցեք և նրանց ընտանիքի անդամներին, դուրս կգա մոտ 150 միլիոն շունչ, վորոնք տառապում են կապիտալիստական կրիզիսի ճիրաններում, վորոնց գլխին կախված է ամեն ոք սովամահի սպառնալիքը: Այդ 40 միլիոնից միայն մի չնչին մասը ոգտվում է մի վորևէ չնչին ոժանդակությամբ: Իսկ մեծագույն մասն այդ չն-

չին վորդումությունից ել դուրկ է հետևաբար վոչ մի յեկամուտի աղբյուր չունի: Նրանց համար իրոք վոր աղետալի յեն կրիզիսի հետևանքները: Այդ գրությունը կազմալուծիչ ազդեցություն է ունենում պրոլետարների և աշխատավորություն մի մասի վրա, առաջ բերում գորություն, պրոնկություն և այլ նման յերևություն մի կտոր հաց ճարելու համար կամ յեթե այդ ել չի ուզում անել, սպասում է իր սովամահին կամ վերջացնում է իր գոյությունն ինքնասպանությամբ: Սա առակ չի, այլ իրականություն: Հաշվառքը ցույց է տալիս, վոր կապիտալիստական յերկրներում սովամահից մեռնողների թիվն ուր որի վրա աճում է, արագությունը աճում է նաև ինքնասպանությունների թիվը: Շատ դեպքեր կան, յերբ ամբողջ ընտանիքով ինքնավոչնչացածն են յենթարկվում, կլին ու յերեխաներով միասին: Այսպիսի սոսկալի պատկերները հազվագյուտ չեն կապիտալիստական յերկրներում: Բանվոր դասակարգի գրությունը քանի գնում ավելի ևս վատթարանում է: Գործազրկության աղետները կրկնապատկվում է յեռապատկվում են նրանով, վոր կապիտալիստները կրիզիսի ամբողջ ծանրությունը բարդում են բանվորների ուխն: Յեթե հարկավոր է փրկել կապիտալիստների շահերը, վրկել նրանց անանկացումից, կրճատում են բանվորների առանց այն ել խղճուկ աշխատավարձը, յեթե հարկավոր է փրկել կապիտալիստական պետությունների փլչող բյուջեները, ապա կրճատում են գործազուրկներին տրվող ոժանդակությունը, յեթե այդպիսին առհասարակ տրվում է: Այս վերջինս տրվում է միայն մի քանի կապիտալիստական յերկրներում, այն ել գործազուրկների մի մասին միայն: Որինակ, Գերմանիայում 4 միլիոն գործազուրկներից միայն 2 միլիոնը ստանում են ոժանդակություն, դրանց ել մեծ մասը ստանում են միայն մի քանի ամսվա



ընթացքում: Վերջապես, Ամերիկայում, վորտեղ 12 միլիոն գործսպորտիկներ կան, պետական ոժանդակութուն չկա բոլորովին: Նույն պետական բյուջեների դրութունն ամբողջովին համար նոր ու նոր հարկեր են մտցվում, վորոնք ուղղված են պլանավորապես բանվոր դասակարգի դեմ: Մի խոսքով, կապիտալիզմն իր գոյութունը պահպանելու ու կրիզիսի ճիւղաններից դուրս գալու միակ միջոցը գտնում է բանվոր դասակարգի շահագործման ուժեղացման, նրա կողպուման մեջ: Սակայն այդ միջոցը խփում է նույն կապիտալիզմին իր մյուս օայրով-մասսաների սղառման կրճատումով, վոր ավելի ևս կրճատում է շուկայում ապրանքների պահանջը: Անտանելի դրութունից դուրս գալու համար ներկայումս կապիտալիստական յերկրների բանվորների մեջ շարժում է առաջ յեկել թորհրդային Միութունն անցնելու և աշխատելու:

Բանվոր դասակարգի անլուր շահագործման և աղետների մեջ ձգելու գործում չափազանց մոտիկ և «սրտակից» մասնակցութուն են ցույց տալիս, ի միջի այլոց՝ սոցիալ-ֆաշիստները: Սրանք իրենց բոլոր «հմտութունը» գործդրին բանվոր դասակարգը «հետ» պահելու և նրա վզին բարդելու կապիտալիզմի կրիզիսի ամբողջ ծանրութունը:

Բավական է հիշել Մակդոնայլդին, վորն այժմ արդեն բացարձակապես անցավ բուրժուազիայի լազերը, սոցիալ-վոստիկան Գրեթեդինսկուն, վորը բանվորական թաղամասերը և ցույցերը գնդացիներով է ցրում, արգելում է կոմունիստական մամուլը ամեն մի չնչին պատճառով և վերջապես, ամբողջ գերմանական սոցիալ-ֆաշիզմը, վորն այնքան ջանք գործ դրեց Բրյուննինգի կառավարութայն «արտակարգ միջոցները», ուղղված բանվորների դեմ, հլու, ջերմեռանդ կենսագործել:

Նույնպիսի աղետալի դրության մեջ է գտնվում և գյուղացիութունը: Գյուղատնտեսական կրիզիսն աղքատության վերջին աստիճանին է հասցրել գյուղացիական մասսաները: Գների ցածր լինելու պատճառով գյուղատնտեսութունն անկարող է վճարել պետական ծանր հարկերը և պարտքերը բանկերին: Իսկ պետութունն ու բանկերը ծախում են գյուղացիական տնտեսութունների ամբողջ ունեցվացքը տնով տեղով, զրկելով նրանց հողերից և բոլոր միջոցներից: Այդպիսով Միացյալ Նահանգներում քայքայված են 5 միլիոն ֆերմերներ, Դանիայում-1930-31 թվականների ընթացքում աճուրդով ծախված են 3970 տնտեսութուն, Լեհաստանում միայն Վրինսկի շրջանում 1929-30-թ. ծախված են 29,843 տնտեսութուն: Ռումինական թերթերից մեկը հետևյալն է հաղորդում գյուղացիների դրության մասին.—

«Հարկեր գտնաձողներն արդեն չեն սահմանափակվում բերքի և անասունների բռնագրավումով: Հարկեր գտնաձողներն սկսում են բռնագրավել նաև գյուղացիական խըրճիթների դռները, պատուհանները, առաջիկա ցրտերին գյուղացիներին մրսեցնելու համար: Իեպքեր են պատահում, յերբ հարկեր գտնաձողները վերցնում են յերեխաներին, վոր ստիպեն գյուղացիներին հարկերը վճարելու»: Այսպես է գյուղացիների դրութունը և ուրիշ կապիտալիստական յերկրներում: Չափազանց հետաքրքիր է նաև հետևյալ փաստը: Անցած տարի շվեդ գյուղացիների մի խումբ, վոր ապրում էր ԽՍՀՄ շվեդական գաղութներից մեկում, իրենց տերտերի ազդեցության տակ ընկնելով, թողին թորհրդային Միութունը և գնացին Շվեդիա: Սակայն մի տարի չանցած, նրանք գիմեցին ԽՍՀՄ դեպարտության, վոր նա իրավունք տա նրանց ԽՍՀՄ վերադառնալու, վորովհետև կյանքն իրենց «հայրենիքում» անտանելի յե: Նրանք անի-

ծում եյին այն որը, յերբ դուքս յեկան խորհրդային յերկրից, վոր միակ հայրենիքն է բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորութեան համար: Պարզ է, վոր մեր կառավարութեանը թույլ տվեց նրանց վերադառնալ:

Նույնպիսի փաստ է տեղի ունեցել և Հյուսիսային Կովկասի հույն գյուղացիներին մեջ: Նրանցից շատերը մի ժամանակ գաղթեցին Հունաստան, իսկ այժմ նորից վերադառնում են Խորհրդային Միութեան:

Վատթարանում է նաև մնացած աշխատավոր մասսաների դրութեանը: Կրճատվում են պետական ծառայողների, բանակի և այլ ծառայողների սոցիալները: Առանձնապես սուր է ինտրիգենցիայի, ուսուցիչների և մանավանդ բժիշկների դրութեանը: Գործարկութեանն ինժեներներին մեջ հսկայական չափեր է ընդունել: Հաճախ նրանք ստիպված են ամենահասարակ աշխատանքի գնալ սովից չմեռնելու համար: Գործազուրկ ինտրիգենցիայից շատերն աշխատում են ռեստորաններում և այլ նման տեղերում վորպես հատակ մաքրողներ կամ աման սրբողներ և այլն: Հաճախանում են, նույնիսկ հայտնի ինժեներների մեջ, ինքնասպանութեան դեպքերը: Բուրժուազիան այդ յերևույթները բացատրում է տեխնիկական ինտրիգենցիայի գերարտադրութեամբ, ապա յեղրակացնելով դրանից, վոր անհրաժեշտ է կրճատել բարձրագույն դպրոցների ցանցը, թե «ինչ ենք անում այդքան կրթված մարդկանց»:

Աշխատավոր մասսաների նման դրութեանն անշուշտ խոշոր անբավականութեան է առաջ բերում նրանց մեջ և նրանք միանում են հետզհետե բանվոր դասակարգին, կապիտալիզմի դեմ պայքարելու համար, իսկ բանվոր դասակարգը կազմակերպվում է վորպես բոլոր աշխատավոր մասսաների ղեկավարը:

Այս բոլորին վերջերս ավելանում է ևս մի նոր աղետ: Յինանսական կրիզիսի հետևանքով փողի գինն ընկնում է: Մարկան, ֆունտը և այլն դրոպում են ցած: Իսկ դա նշանակում է թանկութեան, գների բարձրացում, վոր ևս ավելի վատթարացնում է աշխատավոր մասսաների դրութեանը: Կապիտալիստական հակասությունները սրվում են, աճում է պատերազմի վտանգը:

Կապիտալիստական կրիզիսից դուքս դալու համար բուրժուա-տնտեսագետներն ու «գլխնականները» զուլխ են շարդում, վոր կրիզիսի պատճառը տեխնիկայի բարձր զարգացման մեջն է կայանում: Լավագույն մեքենաների գործածութեանը ավելացնում է պարանքների քանակն այնքան, վոր շուկան այդքան կլանել չի կարող: Սրանից նրանք յեղրակացնում են, վոր հարկավոր է նոր մեքենաներից հրաժարվել, պետք է կանգնեցնել տեխնիկայի առաջ զարգացումը, պետք է յետ վերադառնալ դեպի ավելի հասարակ գործիքները: «Կորչի գիտութեանը և տեխնիկան», «կորչեն մասնագիտական դպրոցները», «յետ դեպի ձեռքի աշխատանքը» — այսպիսի լոգունգները ներկայումս հետզհետե կապիտալիզմի նշանաբանն են դառնում: Յեվ սա այն ժամանակ, յերբ կապիտալիզմի կողքին աճող, զարգացող սոցիալիստական յերկիրը խոչիք է դրել իր առաջ՝ «տիրապետել տեխնիկային»: Արդեն միայն այս փաստը ցույց է սալիս, թե նեխվածութեան վոր աստիճանին է հասել այսօր կապիտալիզմը, թե ինչ չափեր են ստացել կապիտալիստական հակասութեանները:

Նույն հակասութեաններին սրումը կապիտալիստական յերկրներում ուժեղացնում է պատերազմի վտանգը: Յուրաքանչյուր կապիտալիստական յերկիր զազազած շաննման պարտադիր է իր հարևանի կոկորդից բռնելու, միայն հնարավոր

լինեք կրիզիսից դուրս գալու: Սրվում են հակասութունները կապիտալիստական յերկրների միջև շուկաների համար, սրվում է պայքարը հաղթված և հաղթող յերկրների միջև: Սրվում է նաև պայքարը գաղութների համար: Գաղութների և մետրոպոլիսների միջև հակասութուններն ուժեղանում են: Կապիտալիզմը փորձում է կրիզիսից դուրս գալ գաղութների հաշվին: Նման փորձ մենք արդեն ունենք ամենավերջերս յերբ Ճապոնիան դրավեց Մանջուրիան, վորը հմայում է բոլոր կապիտալիստական յերկրներին իր հարստությունով և վորի շուրջը ներկայումս ծավալվում է պայքարը կապիտալիստական յերկրների միջև և մանավանդ Ճապոնիայի, Ամերիկայի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Իսկ Ճապոնիան ուղում է ամրապնդվել Մանջուրիայում, վորովհետև դա հարմար ստրատեգիկ կետ է հետագայում ամբողջ Չինաստանն էլ իր գաղութը դարձնելու և Խորհրդային Միության դեմ ինտերվենցիա պատրաստելու տեսակետից: Ճապոն-չինական կոնֆլիկտը, սակայն, սպառնում է միջազգային պատերազմի վերածվել: Իսկ միջազգային բուրժուազիան վաղուց է պատրաստվում պատերազմի: Հետևյալ թվերն ակներև կերպով ցույց են տալիս, թե ինչպիսի «տեմպով» են նրանք սպառազինվում: Անգլիան իր բյուջեյի 54 տոկոսն է ծախսում ռազմական նպատակների համար, Ֆրանսիան—65 տոկոսը, Լեհաստանն ու Ռումինիան 50 տոկոսը և այլն: Կապիտալիստական բոլոր յերկրներում կրիզիսից դուրս է մնում արդյունաբերության միայն մի ճյուղը—դա ռազմական արդյունաբերությունն է:

Սակայն կապիտալիզմի կրիզիսից փլ կելու ծրագրի մեջ է մտնում նաև ինտերվենցիան Խորհրդային Միության դեմ Բուրժուազիան պատրաստվում է պատերազմի առաջին հերթին ԽՍՀՄ դեմ: Վաղուց արդեն կապիտալիստների իշխան

ե — Խորհրդային տերրիտորիան դարձնել իմպերիալիստական սկստությունների դադութը: Վորքան համեղ պատեռ... նրանք պատրաստվում էյին, ինչպես հայտնի յե, պատերազմել մեր դեմ 1930 թվին, հետո իրենց այդ մտադրությունը հետաձգեցին 1931 թվի գարնանը: Սակայն և առաջին և յերկրորդ անգամ մեր աչալըջությունը և կուսակցության ճիշտ քաղաքականությունը մերկացրեց կապիտալիստների պլանները և վիժեցրեց սրանց: Ինտերվենցիան առայժմ չի հաջողվել և վերջերս դեռ ԽՍՀՄ միջազգային դրությունն էլ համեմատաբար ամրապնդվել է, սակայն դա վոչ միայն չի պակասեցնում ինտերվենցիայի վտանգը, այլ և, համաշխարհային տնտեսական կրիզիսի խորանալովը, ավելի ևս ուժեղացնում է նրան: Մեր յերկրի ինքնապաշտպանության ամրապնդման գործը մեր Միության աշխատավոր մասսաների մշտական հոգսը պետք է լինի:

Յեվ այսպես, կրիզիսից դուրս գալու բուժուազիայի ծրագիրն է՝ ներքին քաղաքականության ասպարիզում—Ֆաշիզմը, բանվոր դասակարգի շահագործման ուժեղացումը, նրան հարկերով խեղդել, իջեցնել մասսաների նյութական մակարդակը և այլն:

Արտաքին քաղաքականության ասպարիզում—պատերազմը, ինտերվենցիա, գաղութների շահագործումն:

Սակայն պրոլետարիատն ունի կրիզիսից դուրս գալու իր ծրագիրը—դա պրոլետարական հեղափոխության և պրոլետարական դիկտատուրայի սահմանման ուղին է:

Ընկ. Ստալինը 16-րդ համագումարում այս առթիվ ասում է.

«Իմ նշանակում է, վոր բուժուազիան դուրքյունից յեյի պիսի փնցի ներքին քաղաքականության ասպարիզում հետագա ֆաշիզացիայի մեջ, դրա համար ոգտագործելով բոլոր

ոեակցիոն ույժերը, նույն քվում յեվ սոցիալ-դեմոկրատիան: Յերկրորդը՝ դա նեանակում է, վոր բուրժուազիան յեյք պիտի փնտրի առեամին քաղաքականութեան ասպարիզում—նոր ինքնապետական պատերազմի յեվ ինքնուրույն յեյք: Յեվ վերջապես, դա նեանակում է, վոր պրոլետարիատը, պայքարելով կապիտալիստական շահագործման դեմ, յեյք պիտի փնտրի հեղափոխութեան մեջ»:

Ընկ. Ստալինի այս խոսքերն ավելի ևս փայլուն ապացույց գտան վերջին տարվա ընթացքում կապիտալիստական յերկրներում տեղի ունեցող անցքերի մեջ: Բուրժուազիան ավելի ու ավելի բացարձակորեն դիմում է ֆաշիստական մեթոդներին, իսկ պրոլետարիատն ավելի ու ավելի հաստատորեն կանգնում է պրոլետարական հեղափոխութեան ուղիին վրա:

ՅԵ) ՀԵՂԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՆԵԼՔԻ ՎՐԱ ՅԵ

Կապիտալիստական կրիզիսի ստեղծած անտանելի դրութեանը համոզում է պրոլետարիատի և աշխատավորութեան լայն մասսաները, վոր միակ յեյքը պետք է փնտրել պրոլետարական հեղափոխութեան ճանապարհին: Հեղափոխական շարժումն արագ քայլերով աճում է կապիտալիստական յերկրներում: Գործադուլները, բարբիկադային կոիվները, հեղափոխական յելույթները ցնցում են կապիտալիստական աշխարհը: Առանձնապէս մեծ թափով է դարգանում հեղափոխական շարժումը Գերմանիայում: Այնտեղ արդեն աճում են հեղափոխական կրիզիսի յերևույթները, վորը ըստ Լենինի բնորոշվում է նրանով, վոր.

«Բանվորների մեծամասնութեանը լիովին հասկանա հեղաշարժման անհրաժեշտութեանը և պատրաստ լինի դրա

համար մահվան գնալ, յերկրորդ, վոր տիրող դասակարգերը կառավարական կրիզիս ապրեն»: Այդպիսի դրութեան է մտանում Գերմանիան: Մի կողմից բանվոր դասակարգը հեղափոխական կերպով վերականգնում է, կոիվում է հեղափոխական կրճատում, համախմբում է կոմունիստական կուսակցութեան շուրջը, մյուս կողմից բուրժուազիան արտակարգ միջոցների յե դիմում, քանի գնում ավելի ևս անկարող է դառնում կառավարելու: Ծիշտ է, թեպետ լիակատար չափով հեղափոխական կրիզիսը չի հասունացել, սակայն այդ կրիզիսի յերեվույթներն աճում են: Դա արտահայտվում է գործադուլային շարժման աճման մեջ (հանքագործների գործադուլը Ռուսում, մետաղագործների գործադուլը Բերլինում և այլն): Կոմկուսի ազդեցութեանն աճում է: Ընտրութեաններին կոմունիստներին տրվող ձայների թիւնն աճում է: Աճում են նաև կոմկուսի շարքերը: Մի տարում գերմանական կոմկուսի անդամների թիւը աճել է 120 հազարից մինչև 300 հազար: Սոցիալ-դեմոկրատ բանվորները թողնելով սոցիալ-ֆաշիստների կուսակցութեանը, խոշոր մասսաներով անցնում են կոմունիստական կուսակցութեան շարքերը: Տարածվում է կոմկուսակցութեան ազդեցութեանը դյուղացութեան և քաղաքի մանր ծառայողների և ինտելիգենցիայի մեջ, վորոնց մեջ ևս հեղափոխական շարժումն աճում է ձեռք ձեռքի բանվոր դասակարգի հետ: Նույնպիսի յերեվույթներ տեղի ունեն նաև Լեհաստանում—գործադուլներ Վարշավում, Գրոդնոյում և այլն, կոմկուսակցութեան դեկավորող դերը դասակարգային կոիվներում, նրա ազդեցութեան աճումը, հեղափոխական յելույթներն Արևմտյան Բելուսիայում, ահա աճող հեղափոխական կրիզիսի նշույթները Լեհաստանում: Մնացած կապիտալիստական յերկրներում ևս պայքարը սրվում է, բուրժուազիայի տիրապետու-

Թյան սխառմը սկսում է տատանվել: Չափազանց հետաքրքիր են վերջերս Անգլիայում տեղի ունեցած դեպքերը: Կառավարութիւնը վորոշեց իջեցնել ռազմական նավաստիների բոճիկը: Նավաստիները ռազմական վարժութիւնների դուրս գալու մոմենտին գործադուլ են հայտարարում կառավարութիւնն այդ վորոշման դեմ: Սա ցնցեց ամբողջ աշխարհը, վորովհետեւ անգլիական նավատորմն ամենակայուն ռազմական ուժն էր համարվում: Նույն Անգլիայում խախտվում են պարլամենտարիզմի և «գեմոկրատիայի» հին արդիւցիաները: Բանվորները դուրս են գալիս նոյնիսկ բարրիկադային կռիւլների, չասենք արդեն գործադուլների աճման, գործադուրկների սովյալ արշավանքների և ցույցերի մասին: Հեղափոխական պայքարը ծավալվում է Ֆրանսիայում (Ռուբէյի տեկստիլիկները գործադուլն ու բարբիկադային կռիւլները), Ամերիկայում (Պենսիլվանիայի հանքագործների գործադուլն ու կռիւլները վոստիկանութիւնն դեմ, ամերիկական կոմկուտի կազմակերպած մասսայական ցույցերն ու արշաւները), Սկանդինավիայի յերկրներում և այլն: Առանձնապես հարկավոր է մատնանշել սպանիական հեղափոխութիւնն վրա, վորտեղ գյուղացիները վճռական կռիւլ են մղում կալվածատիրական և հողեւորական հողատիրութիւնն դեմ: Գյուղացիական հեղափոխական շարժումը ծավալվում է նաև Ռումինիայում, Լեհաստանում, Իտալիայում, Բուլղարիայում և այլն:

Հեղափոխական պայքարն առանձին սուր կերպարանք է ստանում գաղութներում և կիսագաղութային յերկրներում: Չինաստանի մեկ ութերորդ մասն արդեն խորհրդային է: Չինական կոմկուտը գլխավորում է 300 հազարանոց կարմիր բանակը, վորը հաջողութիւնով կռվում է չին բանվորների և գյուղացիների դահիճ—Չան-Կայ Շիյի դեմ: Յե-

րեք անգամ Չան-Կայ-Շին փորձեց խեղդել չինական խորհրդային ռայոնները, յերեք անգամ էլ նրա ղորքերը շըշմեցուցիչ հարվածներ ստացան չինական կարմիր բանակի կողմից:

Չինաստանից հեղափոխական շարժումն անցնում է Հնդկա-Չին, վորտեղ արդեն կազմակերպվել է կոմունիստական կուսակցութիւնը և վորը ղեկավարում է ապստամբող մասսաների կռիւլը Ֆրանսիական իմպերիալիզմի դեմ: Հընդհաստանում ուժեղանում է կոմկուտը և թուրանում է Ազգային կոնգրեսի և Հանդիլի ազգեցութիւնը մասսաների վրա: Այնտեղ աճում են բանվորական շարժումը և գյուղացիական ապստամբութիւնները:

Այսպիսով հեղափոխական շարժումն ընդգրկում է աշխատավորութիւնն բոլոր խավերը բանվոր դասակարգի գլխավորութիւնով: Հեղափոխական շարժման ծավալումը, կոմունիստական կուսակցութիւնների ամրապնդումը և նրանց ազգեցութիւնն աճումը, կատաղեցնում են իմպերիալիստներին: Նրանք ամեն միջոցի յեն դիմում հեղափոխութիւնը խեղդելու, կոմկուտները վոչնչացնելու համար: Արգելում են կոմունիստական թերթերը, ցրում են հեղափոխական կազմակերպութիւնները, մանավանդ Գերմանիայում, վորտեղ կառավարութիւնն հրատարակած արտակարգ ղեկրետներն ուղղված են բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցութիւնն դեմ: Այնտեղ պահանջում են արգելիլ վերջինիս գոյութիւնը: Փաշիստական այս արշավանքը սակայն բուռն բողոք է առաջ բերում բանվոր դասակարգի շարքերում:

Այսպիսով հեղափոխական շարժումն ընդգրկում է համարյա ամբողջ աշխարհը, նա ընդգրկում է աշխատավորութիւնն բոլոր խավերը բանվոր դասակարգի գլխավորութիւնով:

Հեղափոխական շարժման ծավալումը, կոմունիստական կուսակցութեան ներքին ամրապնդումը և նրանց ազդեցութեան ամրապնդումը, կատարեցնում են իմպերիալիստներին: Նրանք ամեն միջոցի յեն դիմում հեղափոխութեանը ինքզինքու, կոմունիստները վոլնչացնելու համար: Արդեւրում են կոմունիստական թերթերը, ցրվում են հեղափոխական կազմակերպութեանները, մանավանդ Գերմանիայում, վորտեղ կառավարութեան հրատարակած արտակարգ դեկրետներն ուղղված են բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցութեան դեմ: Այնտեղ պահանջում են արգելել վերջինիս գոյութեանը: Փաշիստական այս արշավանքը սակայն բուն բողոք և առաջ բերում բանվոր դասակարգի շարքերում:

Հեղափոխական շարժման ինքզինքու գործում ամենամոտ ծառայութեան և մատուցում կապիտալիզմին նրա հավատարիմ սպասարկու սոցիալ-դեմոկրատիան: Սրանք ամբիւր կատարի, քան ամենակատարի Փաշիստները, հալածում են կոմունիստական կուսակցութեանները և բանվոր դասակարգը: Ներկայումս այդ մենշևիկ-դավաճանները բանվորներին խաբելու նոր փորձեր են կատարում: Տեսնելով, վոր նրանք կորցնում են իրենց ազդեցութեանը բանվորական մասսաների մեջ և վերջիններս հեռանում են նրանցից, միջազգային սոցիալ-ֆաշիզմը «ձախ» մանյովրներին յե դիմում իր տիրոջ, կապիտալիզմին, փրկելու համար: Նրանք փորձում են որոբել բանվորների աչալըջութեանը խոսելով կապիտալիստների «սխալների» մասին և վոր այդ «սխալները» նրանք, սոցիալ-դավաճանները, կարող են ուղղել: Սակայն այդ խոսակցութեանների արժեքը բանվոր դասակարգին արդեն դիտե և չնայած այդ «ձախ» մանյովրներին, բանվորական մասսաներն այլևս չեն հաղատում սոցիալ-ֆաշիստներին և համոզվում են, վոր ճիշտ և միայն Կոմիստներն ցույց տված ուղին:

Կապիտալիստական յերկրներում ստեղծված ներկա պայմանները մեծ և պատասխանատու խնդիրներ են առաջադրում կոմիւնիստների առաջ: Վերին աստիճանի վաստակարոպորտունիզմ կլինել յենթագրել, վոր կապիտալիզմի ներկա դրութեանն ինքնին արդեն հեղափոխութեան առաջ կրելի: Այդպիսի արամադրութեաններին դեմ դինում եր դեռ ընկ. Լենինը: Նա ասում եր.

«Բացարձակապես անելանելի դրութեան չի լինում... Փորձել «ապացուցել» նախորո գրութեան «բացարձակապես» անելանելի լինելը դա պեսանդութեան յեվ խոսքերի ու հասկացողութեաններին խաղ կլինել: Այսպիսի յեվ նման հարցերում իսկական «ապացույց» կարող ե լինել միայն պրակտիկան»: (Լենին, Կոմիստներն յերկրորդ կոնգրեսում արտասանած ճառից):

Իսկ այդ «պրակտիկան» կոմունիստական կուսակցութեաններին, նրանց ակտիվութեանից և ճիշտ քաղաքական գծից և կախված չափազանց մեծ չափով: Ահա այդ իսկ պատճառով ներկայումս կոմիւնիստների վրա մեծ պատասխանատուութեան և դրված հեղափոխութեան հաղթանակի և կապիտալիզմի տապալման գործում: Կազմակերպելով բանվոր դասակարգը և աշխատավոր մասսաներն առաջիկա վճռական կռիվների համար, կոմիստները նրանց ամենորոյա կռիվներում, կոմունիստական կուսակցութեանները պետք ե բերեն մասսաները հեղափոխութեան: Դրա համար նա ամենասուբ պայքար պետք ե մղել վոչ միայն ֆաշիզմի դեմ, այլ և սոցիալ-ֆաշիզմի դեմ, աչալուրջ պահելով մասսաները նրանց «ձախ» մանյովրների դեմ: Կապիտալիզմը ինքը չի տապալվի, նրան հարկավոր ե տապալել: Այդ կոչված ե անելու բանվոր դասակարգը, իր կոմունիստական կուսակցութեան դեկավարութեամբ: Այդ վճռական և անտ-

զոք դասակարգային կռիվներում միջազգային պրոլետարիատի համար ուղեցույց աստղ է ԽՍՀՄ, վորտեղ իշխանությունը 14 տարի առաջ իր ձեռքը վերցրեց համաշխարհային պրոլետարիատի հարվածային ջոկատը:

4. ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԵՐԱԳԻԹՄԱՆ ԸՆԹԱՆՈՒՄ Ե ԳԵՊԻ ՍՈՅԵԼԻԶՄ

Միակ յերկիրն ամբողջ աշխարհում, վորտեղ վոչ կրիզիս կա և վոչ էլ նրանից բղխող աղետները—դա Խորհրդային Միությունն է: Այստեղ ընդհակառակը, կատարվում է չտեսնված, հարաճուն վերելք: Այստեղ վոչ միայն գործազրկություն չկա, այլ բանվորական կադրերի սուր պակաս և զգացվում, այստեղ մասսաների գրությունը որ որի վրա բարեխաղվում է, այստեղ կառուցվում է իսկական սոցիալիզմը, հակառակ սոցիալ-ֆաշիստական «սոցիալիզմին»:

Այստեղ բանվոր դասակարգն իր կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հիմնովին վերակառուցում է ամբողջ յերկիրը սոցիալիստական հիմունքներով, ինդուստրացման յենթարկելով հետամնաց յերկիրը: Յերկիր ինդուստրացումն—ահա մեր կուսակցության զլխավոր գիծը: Իսկ դրա գործնական արտահայտությունն է մեր հնգամյա պլանը: Յեվ այդ հնգամյակի իրագործման ասպարիզում են պարունակվում Խորհրդային Միության բանվոր դասակարգի և գյուղի աշխատավորության հսկայական հաղթանակները: Հնգամյակը մենք վոչ միայն իրագործում ենք, այլ և գերիրագործում: Չե՞ վոր մենք հնգամյակը կատարում ենք չորս տարում, իսկ մի շարք ճյուղերում արդեն կատարել ենք 2 և կես և 3 տարում: Որինակ, նավթային արդյունաբերությունն իր հնգամյակը կատարեց 2 և կես տար-

վա ընթացքում, մի շարք ելեկտրո-գործարաններ իրենց հնգամյակը կատարեցին նույնպես 2 և կես տարում: Յերրորդ տարվա վերջին կատարելու յեն իրենց հնգամյակը ծանր արդյունաբերության մի շարք ճյուղեր ևս: Մեր արդյունաբերության աճումը բնորոշվում է հետևյալ թվերով. 1931 թվին մենք աճուխ ենք արտադրում յերկու անգամ ավելի, քան նախապատերազմյան շրջանում, նավթը 1913 թ. արտադրված էր 10 միլիոն տոնն, իսկ 1931 թ. 25,5 միլիոն տոնն, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը, համեմատած նախապատերազմյան արտադրության հետ, աճել է 12 անգամ:

Մեր արդյունաբերութան աճման տեմպերը տարեցտարի արագանում են: Յեթե 1930 թվին մեր արդյունաբերության ընդհանուր արտադրանքը աճել է 25,5 տոկոսով, ապա 1931 թվին նա պետք է աճի 45 տոկոսով: Այդ 45 տոկոսը տալու յե այնքան արտադրանք, վորքան տալիս էր նախապատերազմյան ամբողջ արդյունաբերությունը մի տարում: Ուրիշ խոսքով 1931 թ. մեր ամբողջ արդյունաբերության արտադրությունը պետք է յերեք անգամից էլ ավելի գերազանցի նախապատերազմյան արդյունաբերության տարեկան ամբողջ արտադրանքից:

Միայն 1931 թ. ընթացքում գործի յեն անցնելու 518 նոր գործարաններ և արտադրական միավորներ: Մեր հսկա գործարանները չունեն իրենց նմանը կապիտալիստական յերկրներում: Արդեն աշխատում են և միլիոնների արտադրանք են տալիս այնպիսի հսկաներն, ինչ չիսիք են Սելմաշը, Ստալինգրադի տրակտորի գործարանը, «ԱՄՈ» գործարանը, վոր ավտոներ է արտադրում, Սարկովի տրակտորի գործարանը, շուտով սկսելու յեն աշխատել և ավարտվում են մի շարք գործարաններ և ելեկտրոկայաններ: Հոկտեմբե-

չյան հեղափոխութեան 14-րդ տարեդարձի ուր սկսում են աշխատել ինդուստրիայի այնպիսի հսկաները, ինչպիսին են՝ Մագիիսագուսկի մետաղաձուլակաց գործարանը, «Ուրալմետ-ստոյը», Բերեգլիկովի ֆիլիալական կամբինասը, Չելյաբինսկու տրակտորի գործարանը յեվ այլն:

Արդեն իր շինարարութեան վերջին են մտտենում հըսկա Գինպրոստորոյը, Բորբիկի երկտրոկայանը և նրա կոմբինատը, կառուցվում և Ուրալ-Կուզբասի կոմբինատը— մետաղաձուլական և ամխահանքային այդ նոր խոշորագույն բազան արևելքում: Այսպիսի որինակներն թիմը անչափ կարելի յեր յերկարացնել, սակայն այսքանն ել լիուլի բավական և ներկայացնելու համար մեր ինդուստրացման թափն ու մասշտաբը: Յեվ յերը մենք համեմատում ենք այս բոլորը կապիտալիստական արդյունաբերութեան հետ, մենք տեսնում ենք, թե վորքան մեծ և տարբերութունը մեր յերկրի և նրանց միջև: Մեր հսկա գործարանների նըմաններն արտասահմանում չկան: Մենք իրագործում ենք Իլիչի լողոնը «հասնել և անցնելու» մասին: Մենք արդեն սկսում ենք հասնել, իսկ առանձին ասպարեզներում արդեն իսկ հասել ենք: Փաստ և, վոր մեր նոր կառուցվող և արդեն աշխատող գործարաններից շատերն իրենց մեծութեամբ և արտադրանքի քանակով դերադանցում են կապիտալիստական ամենախոշոր գործարաններն անգամ: Բարձրագույն կապիտալիստական տեխնիկան մեր գործարաններում բազմապատկվում և սոցիալիստական կարգերի, աշխատանքի սոցիալիստական ձևերի վրա և այդպիսով նոր, ավելի բարձր աստիճանի վրա բարձրացվում, նոր սոցիալիստական տեխնիկա ստեղծվում: Մեր տրակտորային գործարաններից յուրաքանչյուրը (Ստալինգրադ, Խարկով, «Կարմիր Պուտիլովեց») արտադրում են տարեկան 30-ից մինչև

50 հազար տրակտոր: Վոր կապիտալիստական յերկրում և վեր գործարանն այդքան տրակտոր և արտադրում տարեկան: Հետո մեր նոր կառուցվող կոմբայնի գործարանները Ռոստովում, Մառատովում, Նովոսիբիրսկում յուրաքանչյուրը տալու յեն տարեկան 25 հազար կոմբայն—այդպիսի գործարաններ կապիտալիզմը նույնպես չունի: Վերջապես, մեր ավտո-գործարանները—«ԱՄՈ»-ն, վոր տալու յե 25 հազար ավտո, Նիժնի-Նովոգորոդի գործարանը, վոր տալու յե 100 հազար տրակտոր—նույնիսկ ամերիկացի հայտնի Չորդի գործարաններն այդքան արտադրանք յերբեք չեն տվել: Ել ավելորդ և հիշել նորից Մագիիտոգորսկը, Գինպրոստորոյը և վերջապես Անգարստոյը, վորի կառուցումը նախատեսվում և յերկրորդ հնգամյակում և վորի կարողությունը հավասար պիսի լինի 10 Գինպրոստոյի:

Յեթե կապիտալիստական յերկրներում ներկայումս սարսափում են տեխնիկայի զարգացումից, աշխատում են կասեցնել այդ զարգացումը, ապա մենք մեր յերկրում արագութեամբ տիրապետում ենք առաջավոր տեխնիկային: Մենք արտադրում ենք վոչ միայն այնպիսի մեքենաներ, ինչպիսին են տրակտորները, կոմբայնները և այլն, այլ նույնիսկ այնպիսի բարձրագույն մեքենաներ, ինչպիսիք են տուրբինները (հսկայական հզորութեամբ), բլումինգները, իսկ մեր ավիացիոն արդյունաբերութունը համաշխարհային անուն ունի:

Արտադրութեան քանակի տեսակետից ևս մենք արդեն հասնում ենք կապիտալիստական առաջավոր յերկրներին: Որինակ, նավթի արտադրութեամբ մեր Միութնունն արդեն յերկրորդ տեղն և բռնում ամբողջ աշխարհում: Յերկրորդ տեղն ենք բռնում նաև տրակտորների արտադրութեամբ: Մենք առաջին տեղն ենք բռնում գյուղատնտեսական մեքենաների արտադրութեան ասպարիզում: Սև մետաղաձուլու-

թյան արտադրութեամբ մենք այս տարի կ'հասնենք Ֆրանսիային և Անգլիային և կ'զբաւինք արդեն չորրորդ տեղը:

Յեւ չնայած դրան, մենք դեռ ևս հետ ենք մնում կապիտալիստական յերկրներէց: Ընկ. Ստալինն ասում էր, վոր մենք հետ ենք մնացել կապիտալիստական յերկրներէց 50-100 տարով և վոր մենք պետք է հասնենք կապիտալիստական առաջավոր յերկրներին և անցնենք նրանցից ամենաշատը տասը տարում: Յեւ մենք այդ ուղղութեամբ վճռական հաջողութեաններ ունենք: Հերթական խնդիր է արդեն յերկրորդ հնգամյակը, վորի ընթացքում մենք պետք է արդեն անցնենք կապիտալիստական յերկրներէց: Զարգացման այսպիսի տեմպերն անհնարին և անհասկանալի յեն կապիտալիզմի համար, սակայն անհրաժեշտ և հնարավոր են սոցիալիստական շինարարութեան յերկրում:

Մեր արդյունաբերութեան զարգացման ավալներն ապացուցում են նաև, վոր մեր յերկրում հսկայական սոցիալ-տնտեսական տեղափոխումներ են տեղի ունենում: Նախ և առաջ մեր արդյունաբերութեան արդեն վճռական գերակշռութեան է ստացել ամբողջ ժողովրդական տնտեսութեան մեջ: Արդյունաբերութեան արտադրանքը կազմում է ժողտնտեսութեան ամբողջ արտադրանքի 53 տոկոսը: Մենք արդեն ազդարային-ինդուստրիալ յերկրից վերածվում ենք ինդուստրիալ-ազդարային յերկրի, մանավանդ վոր արդյունաբերական արտադրանքի մեջ ևս աճում է ծանր արդյունաբերութեան արտադրանքի տեսակարար կշիռը: Մենք իրազրոծում ենք Իլլիչի կտակը ծանր արդյունաբերութեան մասին, վորը կազմում է սոցիալիզմի հիմքը:

Վերջապես, յեթե մենք վերլուծենք սոցիալիստական և մասնավոր սեկտորի փոխհարաբերութեանը խոշոր արդյունաբերութեան մեջ, մենք կ'համոզվենք, վոր վերջինս չնչին

տոկոս է կազմում, ներկայումս այդ արդյունաբերութեան մասնավոր հատվածի արտադրանքը հավասար է ընդհանուր արտադրանքի 0,7 տոկոսին: Այս հիման վրա ընկ. Ստալինը 16-րդ համագումարում հայտարարեց, վոր.—

«Ով ում» հարցը, այն մասին, թե սոցիալիզմը կ'հաղթի կապիտալիստական արեբեքին արդյունաբերութեան մեջ, թե նրանից կ'հաղթեն սոցիալիզմը,—արդեն վառուցված է հիմնականում հոգուս արդյունաբերութեան սոցիալիստական ձեւերի»...

Ահա հիմնականում մեր արդյունաբերութեան զարգացման արդյունքները: Արդյունաբերութեան այդ զարգացումն, ինչպես հայտնի յե, անհրաժեշտ բազա ստեղծեց գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման համար ևս: Առանձնապես խոշոր են այդ տեսակետից արդյունաբերութեան նվաճումներն ընթացիկ տարվա ընթացքում, վորի հիման վրա մեր յերկրում հնարավոր յեղավ 1931 թ. ավարտել հիմնական հոցահատիկային ռայոններում գյուղատնտեսութեան համատարած կոլեկտիվացման և նրա հիման վրա կուլակութեան վորպես դասակարգի վոչնչացման խնդիրը:

5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

«Սոցոբ արդյունաբերութեանը գյուղացիներին կախից յեվ ռալից ազատելու միակ միջոցն է—այսպես էր սովորեցնում մեզ Ը. Լենինը:

Բոլշևիկյան կուսակցութեանը և բանվոր դասակարգը, հետևելով Լենինի այս հրահանգին, իրենց ուժին ու միջոցներն ուղղեցին գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման, նրա տեխնիկական վերադիման գործին:

Յեւ վ մեր հաջողություններն այդ ասպարիզում ավելի քան խոշոր են:

Գյուղացիական մասսաները սովխոզների և առաջին կոլխոզների փորձի վրա համոզվելով սոցիալիստական խոշոր տնտեսութեան առավելությունների մեջ, միլիոնավոր զանգվածով շարժվեցին դեպի կոլխոզները: Այդ շարժումը սկսվեց ընդամենը յերկու տարի առաջ և արդեն այս տարի մեր Միութեան գյուղացիական տնտեսությունների 62 տոկոսը միացած են կոլխոզների մեջ: Առանձնապես շացուցիչ են կոլեկտիվացման հաջողությունները 1931 թվականի, հնդամյակի յերրորդ, վճռական տարվա ընթացքում: Այդ արվա ընթացում մեկ հիմնականում ավարտել են արդեն գլխավոր հացահատիկային օջանների համասարած կոլեկտիվացումը: Այստեղ կոլեկտիվներում միացված են գյուղական տնտեսությունների 80 տոկոսից ավելին: Այս շրջանների թվումն է նաև մեր Հյուսիսային Կովկասը:

Աճում է նաև ցանքսերի տարածությունը: 1928 թվին ցանված եր 118 միլ. հեկտար, 1929-ին—127,8 միլ. հեկտար, իսկ 1931 թ.— 137 միլ. հեկտար, ըստ վորում սոցիալիստական սեկտորի ցանքսերը ներկայումս (1931 թ.) կազմում են արդեն բոլոր ցանքսերի 70 տոկոսը: Միայն սովխոզներին արդեն բոլոր ցանքսերի 8 միլիոն հեկտար: Մենք ունենք այնպիսի սովխոզներ, վորոնց արտադրած հացահատիկը կբավականանա ամբողջ Մոսկվան կես տարի կերակրելու համար: Այդպիսիներից մեկն է մեր Հյուսիսային Կովկասի «Գեդանտ» սովխոզը: Այդպիսի խոշոր գյուղական տնտեսություններ կապիտալիզմը յերբեք չի ունեցել: Նույնիսկ ամենախոշոր կապիտալիստական գյուղական տնտեսությունները փոքրիկ տնտեսություններ են յերևում մեր հսկա սովխոզների դիմաց: Յեւ վ իդուր չի, վոր 16-րդ

համագումարը մեր յերկիրը հայտարարեց ամենախոշոր գյուղատնտեսութեան յերկիր: Ամենամանր գյուղատնտեսութեանից մենք վիթխարի քայլերով հասանք ամենախոշոր սոցիալիստական տնտեսութեան:

Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ուղիի վրա մենք կարողացանք լուծել գյուղատնտեսութեան հիմնական պրոբլեմը—հացահատիկային պրոբլեմը: Այժմ այդ խնդիրը լուծված է վերջնականապես: Նույն միջոցով կուսակցութեանը լուծում է այժմ անասնաբուծութեան և տեխնիկական կուլտուրաների պրոբլեմը: Այս վերջին պրոբլեմների լուծման մեջ ևս մենք այս տարի խոշորագույն նվաճումներ ունենք: Տեխնիկական կուլտուրաների ցանքսերը մեր յերկրում 1931 թ. հսկայական աճում ստացան: Մենք ունենք արդեն խոշորագույն անասնապահական-բամբակային և այլ կուլտուրաների սովխոզներ, վորոնք արագ տեմպերով զարգանում և դուրս են բերում մեր յերկիրը մի և տեխնիկական կուլտուրաների կարիքից, միևնույն ժամանակ սոցիալիստական վերակառուցման ուղիով տանելով նաև անասնապահական, բամբակաբուծական և այլ գյուղացիական տնտեսությունները: Տեխնիկական կուլտուրաների շրջաններում այս տարի կոլեկտիվացման են յենթարկված բոլոր տնտեսությունների 60 տոկոսից ավելին:

Գյուղատնտեսութեան վերակառուցման անփոխարինելի լծակիցներ են մեքենա-տրակտորային կայանները: Նրանք են իրագործում գյուղատնտեսութեան տեխնիկական վերազինման խնդիրը, մեքենայի շուրջը համախմբելով և միացնելով գյուղական մանր տնտեսությունները: Լենինը տասը տարի առաջ ասում էր.

«Յեթե մեկ վաղը կարողանայինք սալ հարյուր հազար լավ քրակտորներ, մասակարարել նրանց բեկզիմով, ապանովել

նրանց մեհեմալարներով, ապա միջակ գյուղացիներ կանե՞ր
«յես կոմունայի կողմնակից եմ»:

Ընկ. Լենինի այս նախազուշակունքն իրագործվեց: Մենք
այս տարի արդեն բաց ենք թողնում դաշտերը 120 հազար
տրակտորներ և դեռ այդ թիվը չլրացրած, միջակ գյուղացիներ
ասաց, վոր նա կոմունեիզմին կողմնակից ե:

Առանձնապես վերջիստի յե մեր առաջադիմությունն
այդ ասպարեզում հնգամյակի յերրորդ, վճռական տարում:
Այդ տարին մենք սկսեցինք ընդամենը 360 մեքենա-տրակ-
տորային կայաններով, մենք նպատակ դրինք այդ տարվա
ընթացքում կազմակերպել ևս 1040 կայաններ և հասցնել
նրանց թիվը 1400-ի: Այժմ դեռ տարին չվերջացած, մենք
այդ խնդիրն իրագործել ենք: Մենք այլևս պետք է կազ-
մակերպենք 2000 այդպիսի կայաններ և այն ժամանակ մեր
ամբողջ գյուղատնտեսությունը ընդգրկված կլինի տրակ-
տորներով:

Այսպիսին են մեր գյուղատնտեսության սոցիալիստա-
կան վերակառուցման տնտեսական արդյունքները: Սակայն
ավելի խոշոր են նրա հեռանկարները: Մինչև հնգամյակի
վերջը մենք հիմնականում ավարտելու յենք գյուղի սոցիա-
լիստական վերակառուցման գործը, հսկայական չափով ա-
ճելու յեն ցանքսերը: Միայն Ձերնտորեստի սովխոզների
ցանքսերը հավասար կլինեն ամբողջ Արգենտինայի ցանք-
սերի տարածության: Բոլոր սովխոզները միասին հնգամյա-
կի վերջում պիտի ցանեն 1 միլիոն հեկտար ավելի, քան
ցանում է այժմ ամբողջ Կանադան:

Այս ընդհանուր վերելքի հիման վրա բարելավվում է
մասսաների նյութական դրությունը: Արդյունաբերության
մեջ ներգրավվում են բանվորական կազմերի նոր միլիոններ:
Գործազրկությունն արդեն վաղուց վոչնչացված է և որվա

սուր պրոբլեմներից մեկն է այժմ—արդյունաբերությունը
բանվորական կազմերով ապահովելու պրոբլեմը: Այժմ բան-
վորական ուշժի սուր պակաս է գդացվում: Բանվորների աշ-
խատավարձն աճում է: Աշխատավարձի ընդհանուր տարե-
կան ֆոնդն աճե ու յե 3 միլիարդ ուղարկվում է: Բարելավվում են
նաև բանվորների կենցաղային պայմանները: Բարձրանում
է բանվորների կուլտուրական մակարդակը:

Անհամեմատ բարձրացել է գյուղացիության դրու-
թյունը: Ինչպես Ստալինն է ասում, այժմ արդեն գյուղում
չկա սովի անը, վոր գյուղացին (չքավորն ու միջակը) ան-
համեմատ ավելի ապահովված է, քան առաջ:

Խորհրդային Միության աշխատավոր մասսաների դը-
րության այս ընդհանուր վերելքն արդյունք է մեր սոցիա-
լիստական շինարարության աճման: Մեր Խորհրդային Միու-
թյան մեջ, հսկայական կապիտալիստական յերկրներին, գոր-
ծարանները վոչ միայն կանդ չեն աճնում, այլ ընդհակա-
ռակն, աշխատում են որ ու գիշեր, ամբողջ տարին: Մեր
գործարանները համարյա բոլորն արդեն անցել են 7-ժամյա
աշխատանքային որվան և 5-որյակի:

Հետևաբար ինչպես մեր ընդհանուր տնտեսական վե-
րելքը, նույնպես և աշխատավոր մասսաների նյութական և
կուլտուրական դրությունը համեմատության մեջ դնել ան-
գամ անկարելի յե կապիտալիստական յերկրների հետ:

6. ՄԵՆՔ ՀԱՐՉԱՎՈՒՄ ԵՆՔ ԺԱՎԱԼՎԱԾ ՓՐՈՆՏՈՎ

Սոցիալիստական շինարարության բոլոր ասպարեզնե-
րում մեր ունեցած հաջողություններն այնուամենայնիվ
ձեռք են բերված ամենասուր պայքարով, հսկայական ար-

գելճների հաղթահարման միջոցով: Մեր սոցիալիստական շինարարութիւնն առաջին հերթին կատաղի դիմադրութեան և հանդիպել դասակարգային թշնամիների կողմից: Դասակարգային սուր պայքարը մեր շինարարութեան մըշտական ուղեկիցն է: Սակայն կուսակցութեան ղեկավարութեամբ մեր յերկրի պրոլետարիատն աշատեղ ևս տարել է խոշորագուէն հաղթանակներ:

Կուլակը դա հիմնական հակապրոլետարական ուժն է մեր յերկրում, վոր կատաղիորեն դիմադրում է գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցմանը: Կուսակցութիւնն ու բանվոր դասակարգն սկզբում սահմանափակելով կուլակի շահագործական ձգտումները, հետո համատարած կոլեկտիվացման հիման վրա անցան նրա լիկվիդացիային վորպէս դասակարգի: Յեւ վայտոր, 14-րդ տարեդարձի նախորդակին գյուղում դասակարգային ուժերի փոխհարաբերութիւնը վճռականորեն փոխվել է հողուտ պրոլետարիատի: Սա, իհարկէ, չի նշանակում, վոր դասակարգային պայքար այլևս չկա, վոր կուլակը չի դիմադրում, այլ ընդհակառակը, կուլակն իր գոյութեան վերջին մոմինտին անգամ ամենակատաղի դիմադրութիւն է ցույց տալիս մեր պրոլետարական առաջխաղացման: Իայց այժմ արդեն պրոլետարիատը գյուղում ավելի լայն հենարան ունի, քան տառջ: Առաջ պրոլետարիատի հենարանն էր գյուղում չքավոր գյուղացիութիւնը և դաշնակիցն էր միջակը: Այժմ կոլխոզնիկ դարձած չքավորն ու միջակն են նրա հենարանը: Նախկին դաշնակից միջակն ևս կոլխոզնիկ լինելով, այտոր պրոլետարիատի հենարանն է գյուղում: Կոլխոզ-

ներից դուրս մնում են 10 միլիոն անհատավար գյուղացիներ: Նրանք մնում են վորպէս պրոլետարիատի դաշնակից, սակայն նրանք էլ վաղվա կոլխոզնիկներն են:

Առաջ մենք գյուղում ունեյինք վորպէս կենտրոնական դեմք, միջակ գյուղացուն: Սակայն այժմ արդեն գյուղատնտեսութեան կենտրոնական դեմքը կոլխոզնիկն է:

Մեր յերկրի ինդուստրացման հաջողութիւնները, պրոլետարիատի դիրքերի ամրապնդումը, գյուղի սոցվերակառուցման նվաճումները ստեղծեց դասակարգային ուժերի այնպիսի փոխհարաբերութիւն, վորը հնարավորութիւն տվեց մեզ ծավալված հարձակման անցնելու ամբողջ Ֆրոնտով կապիտալիստական տարերի դեմ, վոչնչացնելու համար կապիտալիզմի բոլոր արմատները մեր յերկրում, անհնարին դարձնելու նրա զարգացումն ու վերածնումը: Արդեն անցյալ է մանր անհատական գյուղացիական տնտեսութիւնը և իր հետ անցյալն է տանում կապիտալիզմի վերածնման հնարավորութիւնը մեր յերկրում: Ավելին՝ մենք արդեն վոտք ենք կոխել սոցիալիզմի շրջանը: Սա նշանակում է, վոր սոցիալիստական տնտեսութիւնը մեր յերկրում վճռական գերակշռութիւն է ստացել: Արդունարբերութեան մեջ մասնավոր կապիտալիստական տարբերն արդեն ջուրն են ընկնում, գյուղատնտեսութեան մեջ մենք վոչնչացնում ենք (թեպէտ դեռ բոլորովին չենք վոչնչացրել) վերջին կապիտալիստական դասակարգը և կապիտալիզմի վերականգնման բազան-անհատական տնտեսութիւնը: Առևտրի ասպարիզում ևս մասնավոր կապիտալը համարյա վոչնչացված է: Այսպիսով բոլոր հիմնական լծակները արդեն անցել են պրո-

լետարիատի ձեռքը և այդ պատճառով մենք իրավունք ունենք ասելու, վոր վտաք ենք դրել սոցիալիզմի շրջանը, գտնվելով հանդերձ դեռ ևս նեպ-ի վերջին ետապում:

Մենք արդեն ընթացիկ տարրում ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: Խոշոր արդյունաբերութեան զարգացումը, խոշոր սոցիալիստական գյուղատնտեսութեան առաջադիմութեանը ստեղծում են սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը: Սա նշանակում է, վոր մենք արդեն անցնում ենք սոցիալիզմի անմիջական կառուցման:

Սակայն դասակարգային պայքարն ու դժվարութիւնները մեր յերկրում դեռ չեն վերջացած: Նա դեռ շարունակվում է: Կուլակի և նեպմանի պայքարը մեր կուսակցութեան դեմ աջակցութիւն գտալ նաև մեր կուսակցութեան տատանվող տարրերի մեջ: Բոլոր վերև թված նվաճումներն ուղեկցվել են աջերի և «ձախերի» հարձակումներով մեր կուսակցութեան լենինյան ճիշտ դժի վրա: Յերկրի ինդուստրացման ասպարիզում աջերն ու «ձախերն» ամեն ջանք գործ դրին այդ գործը վիժեցնելու և կապիտալիզմի զարգացման լայն ճամբա բաց անելու համար: Աջերն ամենուրեք բռնվում էին, վոր յերկիրն անդունդ է գլորվում, վոր յերկրի արտադրական ուժերի զարգացումը հնարավոր է միայն անհատական և կուլակային տնտեսութեան զարգացման միջոցով, վոր կուլակը ինքն իրեն հասարակ կոոպերացիայի միջոցով կներաճի սոցիալիզմի մեջ, վոր կարիք չկա արագ ինդուստրացման ու դրա հիման վրա գյուղատնտեսութեան կուլեկտիվացման: Այս թեորիաների դեմ, վորոնք արտահայտում էին կուլակութեան, կապիտալիստական տարրերի իդեոլոգիան, կուսակցութեանը ստիպված եր անողոք պայքար մղել, աջ թեքումն անհամատեղելի գտնելով կուսակ-

ցութեան անդամի կոչման հետ: Այդ պայքարում աջերը լիազատար պարտութիւն կրեցին, նահանջեցին և կուսակցութեան նվաճումներից մեկը կայանում է նրանում, վոր 14-րդ տարեդարձին դալիս է, վորպես միաձույլ կուսակցութեան չունենալով իր շարքերում վորևէ կազմակերպված աջ թեքման թեկուզ չնչին խմբավորում: Ծիշտ է, կուսակցութեան, առանձին անդամներ, նրա առանձին ողակներում, մանավանդ գործնական աշխատանքի պրոցեսում արտահայտում են դեռ ևս աջ ոպորտունիստական յերևույթներ և տրամադրութիւններ: Սակայն դա միայն առանձին դեպքեր են և առանձին անհատներ կամ խմբակներ:

Նույնպիսի սուր պայքար մղեց կուսակցութեանն իր ժամանակին տրոցկիզմի դեմ և նրա մնացորդների դեմ: «Չախ» քյալլագոյողութիւնները 1930 թվի դարնանը անողոք հարված ստացան կուսակցութեան կողմից և դրանով մեր կուսակցութեանն ապահովեց գյուղատնտեսութեան կուլեկտիվացման հետագա հաջող ընթացքը: Սակայն «ձախ» քյալլագոյողները դեռ այժմ առանձին դեպքերում հայտնաբերվում են, մանավանդ ներկայումս կոլխոզների ներքին տնտեսական կյանքի կազմակերպման գործում:

Չախը չախվեցին նաև կուսակցութեան կողմից աջ-«ձախ» բրովը և հաշտվողականութեանը թեքումների վերաբերմամբ: Սակայն թեքումների վտանգը մեր կուսակցութեան մեջ դեռ մնում է և վորպես զլխավոր վտանգ մնում է աջ թեքումը, վորի դեմ պայքարը վոչ մի բոպե չպիտի թուլացնել: Պայքարը թեքումների դեմ դա յերկրում տեղի ունեցող դասակարգային պայքարի արտահայտութիւնն է, իսկ դասակարգային պայքարը մեր յերկրում ամենասուր կերպարանք է ստացել: Դեռ մի տարի. չկա, ինչ մեր առաջով անց -ն Ռամզինի և մենշևիկների դատական պրոցեսները:

Նրանք ցույց տվին, վոր դասակարգային թշնամին զեռ զենքը մաքուր և պահում և ամեն ընդհանուր պատրաստ և խփելի մեղ թիկունքից: Կապիտալիզմի մեր յերկրի ուժերը միացած համաշխարհային կապիտալիզմի հետ, փորձում եյին տապալել պրոլետարիատի դիկտատուրան, սակայն անհաջող: Մենք միևնույն ժամանակ գիտենք, վոր այդ վնասարարներն ունեյին կապիտալիզմը մեր յերկրում վերականգնելու իրենց թեորիաները, վորոնք շատ մտիկ են մեր աջ ոպորտունիստական թեորիաներին: Այդ իդեոլոգիական հարակցութունը թույլ եր տալիս վնասարարներին աջակցելու աջերին Կուսակցության զեռ նրանց մղած պայքարում: Այժմ, չնայած այդ վնասարարական և կապիտալիստական—կուսակային կազմակերպությունները վոչնչացված են, բայց վոչ վոք յերաշխափորիլ չի կարող, վոր վաղը նման ռեցիդիվներ չեն կարող կրկնվել: Այդ պատճառով կուսակցությունը հրավիրում և բանվորական մասսաներին վոչ մի ընդհանուր չ'թուլացնել իր աչալրջությունը և պայքարը դասակարգային թշնամու դեմ: Դասակարգերը զեռ մնում են. կա ուրեմն և դասակարգային պայքարը: Ծավալված ֆրոնտով պետք և շարունակել հարձակումը կապիտալիստական տարերի վրա:

7 ԻՆՉՈՒՄՆ Ե ՄԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Յերը մենք համեմատում ենք վերև նկարագրված դրությունը կապիտալիստական յերկրներում և մեր Խորհրդային Միության մեջ, անխուսափելի հարց և առաջ դալիս—ինչո՞ւմ և կապիտալիստական սիստեմի կրիզիսի և ընդհակառակը, մեր վերելքի, մեր հաջողությունների գաղտնիքը: Այդ հարցին Կլասիկ պատասխան և տվել ը. Ստալինը 16-րդ համագու-

մարում և նրա խոսքերով միայն կարելի յե պատասխանել այդ հարցին:

«Ինչո՞ւմ և պատճառը, վոր ԽՍՀՄ, չնայած նրա կուստուրական հետամնացության, չնայած կապիտալիստների պակասության, չնայած տեխնիկապես կոփված տնտեսավար կադրերի պակասության, գտնվում և աճող տնտեսական վերելքի դրության մեջ և վճռական հաջողություններ ունի տնտեսական շինարարության ճակատում, իսկ առաջավոր կապիտալիստական յերկրները, չնայած կապիտալիստների առատության, տեխնիքական կադրերի առատության և կուլտուրականության ավելի բարձր մակարդակին, գտնվում են աճող տնտեսական կրիզիսի դրության մեջ և տնտեսական զարգացման ասպարիզում պարտություն պարտության հետևից են կրում:

Պատճառը մեզ մոտ և կապիտալիստների մոտ տնտեսական սիստեմների տարբերության մեջն և:

Պատճառը տնտեսության խորհրդային սիստեմի առավելությունների մեջն և հանդեպ կապիտալիստական սիստեմի:

Ի՞նչ և տնտեսության խորհրդային սիստեմը:

Տնտեսության խորհրդային սիստեմը նշանակում և, վոր՝

1) Կապիտալիստների դասակարգի իշխանությունը տապալված և և փոխարինված և բանվոր դասակարգի իշխանությամբ:

2) Արտադրության միջոցները, հողը, գործարանները և այլն խլված են կապիտալիստներից և հանձնված են ի սեփականություն բանվոր դասակարգին և գյուղացիության աշխատավոր մասսաներին:

3. Արտադրության զարգացումը յենթարկված և վոչ

թե կոնկուրենցիայի և կապիտալիստական շահի ապահովման սկզբունքին, այլ պլանային ղեկավարութեան և աշխատափոփոխութեան նյութական և կուլտուրական մակարդակի սխտեմատիկ բարձրացման սկզբունքին:

4. Ժողովրդական յեկամուտի բաժանումը կատարվում է վոչ թե շահագործող դասակարգերի... շահերի համապատասխան, այլ բանվորների և գյուղացիների նյութական դրութեան բարձրացման և գյուղում ու քաղաքում սոցիալիստական արտադրութեան լայնացման շահերին համապատասխան:

5. Աշխատավորների նյութական դրութեան սխտեմատիկ բարելավումը և նրանց պահանջների (վճարունակութեան) անընդհատ աճումը, արտադրութեան լայնացման մշտական աճող աղբյուր լինելով, յերաշխափորում են բանվոր դասակարգը գերարտադրութեան կրիզիսներին, գործազրկութեան աճումին և այլն:

6. Բանվոր դասակարգը յերկրի տերն է հանդիսանում և աշխատում է վոչ թե կապիտալիստների համար, այլ իր սեփական դասակարգի համար:

Ահա թե ինչումն են կայանում խորհրդային սխտեմատի առավելութունները հանդեպ կապիտալիստականին. Այս հատկութուններից և վոչ մեկը չունի կապիտալիզմը: Այնտեղ չկա պլանային ղեկավարութուն և չի կարող լինել: Այնտեղ բանվոր դասակարգը շահագործվում է կապիտալիստական դասակարգի ոգտին, այնտեղ սխտեմատիկաբար վատթարանում է աշխատավոր մասսաների նյութական դրութունը: Կապիտալիզմը տառապում է այն հակասութուններից, վորոնք մենք մատնանշել ենք գրքիս սկզբում:

Այն փաստը, վոր բանվոր դասակարգը յերկրի տերն է և իր համար է աշխատում, առաջ է բերում այնպիսի յերկ-

զույթներ, ինչպիսին են սոցիալիստական մրցակցութունը, հարվածայնութունը և աշխատանքի այլ սոցիալիստական ձևերը, վորոնք վճռական դեր են ունեցել մեր հաջողութունների նվաճման գործում: Վերջապես, մեր հաջողութունների մի անվիճելի պայմանն է յեղի մեր կուսակցութեան գլխավոր գծի ճշտութունը և նրա պայքարը յերկու Ֆրոնտում, վորի վրա մենք կանգ ենք առել մի քիչ առաջ:

Է. ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ԳԵՊԻ ՆՈՐ ՀՍՂԹԱՆԱԿՆԵՐ

Հոկտեմբերի 14-րդ տարեդարձը բերելով մեզ հսկայագուշն հաղթանակներ, մեր առաջ դնում է և նոր, ավելի ևս մեծ և պատասխանատու խնդիրներ: Դեռ ևս շատ «ամբողջներ» մենք պետք է վերցնենք: Յեզվ այդ խնդիրների իրագործումը հնարավոր կլինի ներկա ետապում, մեր յերկրի վերակառուցման շրջանում, առաջին հերթին տեխնիկային տիրապետելով: «Տեխնիկան վերակառուցման շրջանում վորոշում է ամեն ինչ»-ասում է մեր կուսակցութեան առաջնորդ Ը.Ստալինը: «Բայլը կենցեղը պետք է տիրապետեն տեխնիկային»-հրահանգում է նա: Յեզվ այդ հրահանգի իրագործման գուրս յեկան միլիոնավոր բանվորական մասսաները: Դեռ մի քանի ամիս առաջ միջազգային բուրժուազիան չարախինդ հեգնում էր, թե, ըբայլը կենցեղը մեծ-մեծ գործարաններ կառուցեցին, իսկ այդ գործարանների տեխնիկային չեն տիրապետում, նոր գործարանները կարգին չեն գործում: Այս ասելով, նրանք գործարանները կարգին չեն գործում: Այս ասելով, նրանք մատնացույց էյին անում Ստալինգրադի սրակտորալին գործարանի վրա: Յեզվ իրոք, այնտեղ սկզբում դրութունը շատ վատ էր: Գործարանը հսկայական ճեղքվածքներ ուներ: Բայց այժմ արդեն, մի քանի ամիս անցած, Ստալինգրադի հար-

վածայինները հաղթող դուրս յեկան: Նրանք վերջ ի վերջո տիրապետեցին տեխնիկային և այժմ արդեն ամեն ոք արտադրում են 100 տրակտոր:

Ստալինգրադի որինակը ցույց է տալիս, վոր մեր նորահասուց զործարանների համար հարկավոր է նախորոք պատրաստել, վարժեցնել բանվորական կադրերը: Որինակ, ԱՄՈ զործարանը, վոր սկսեց զործել հոկտեմբերի 1-ից, մեքանի ամիս առաջ արդեն սկսեց վարժեցնել և պատրաստել իր բանվորական կադրերը: Նույնն արավ և Խարկովի տրակտորի զործարանը, նույնն են անում այժմ բոլոր նոր կառուցվող զործարանները: Բայլ շինիկները սկսել են համառ պայքար տեխնիկային տիրապետելու համար: Սակայն դեռ վոչ ամեն անդ լիակատար չափով ըմբռնել են այդ խնդրի ամբողջ կարևորութունը: Անհրաժեշտ է 14-րդ տարեդարձի ողբ նոր միլիոններ քաշել տեխնիկային տիրապետելու գործին:

Մեր զարգացումը նոր պայմաններ է ստեղծել: Յերկրում տեղի ունեցած հսկայական փոփոխութունները պահանջում են նոր ձևով, նոր մեթոդներով մոտենալ մեր տնտեսության ղեկավարման, մեր հիմնական խնդիրներին լուծման գործին: Այդ պայմանների և աշխատանքի նոր մեթոդների վրա մատնանշեց ընկ. Ստալինն իր ղեկուցման մեջ, վոր արտասանել եր հուլիս ամսում անտեսավարներին խորհրդակցությանը:

Մեր արդյունաբերական շինարարության ասպարեղում մինք սուր կարիք ենք զգում բանվորական կադրերի: Մեր տնտեսավարները հաճախ սպասում են, վոր բանվորական ուշժը առաջվա նման, ինքնահոսի կարգով, կգա: Յեվ սպասում են: Մինչդեռ բանվորը չի գալիս վորովհետև այժմ չկան այն պատճառները, վոր ստեղծում եյին այդ ինքնա-հոսք-գործադրկութունն ու գյուղի գերաբնակութունը:

Այժմ անհրաժեշտ է հույս չդնել բանվորական ույժի ինքնահոսի վրա, այլ գրավել նրան կազմակերպված ձեով: Բացի դրանից, հարկավոր է աշխատանքը մեխանիզացիայի յենթարկելով, փափկացնել բանվորական ույժի պակասը:

Պեսե է, բացի դրանից, կովել բանվորական ույժի հոսունության դեմ, շահագրգռելով բանվորներին նյութակա-նորեն և բարելավելով բանվորների կենցաղային պայմանները: Դրա համար անհրաժեշտ է վոչնչացնել հավասարեցուցիչ վարձատրության սխտեմը: Ով ավելի լավ է աշխատում, ով ավելի վորակյալ է, նա ավելի յել վարձատրություն է ստանում: Այս սկզբունքն ամենախոր կերպով պետք է մղել մեր զործարանները, կոլխոզները և տնտեսության բոլոր ճյուղերը:

Պեսե է վոչնչացնել նայել դիմագրկությունը արտադրության մեջ: Պետք է վոչնչացնել անպատասխանատու, անփուլթ վերաբերմունքը դեպի տրակտորն ու անասունները և առհասարակ յուրաքանչյուր գործի մեջ: Ամեն վոք պետք է գիտենա իր մեքենան, գործիքը, պետք է պատասխանատու լինի նրանց և իր գործի համար: Հայտնի յե թե ինչպիսի դրության հասցրեց դիմագրկութունը մեր յերկաթուղագծերի վրա:

Պեսե է սեղծել բանվոր դասակարգի սեփական արտադրական-տեխնիկական ինսիլիգենցիան: Չի վոր նրանց սուր պակասն է դպացվում արտագրության մեջ: Ստեղծելով նոր կադրերը, միևնույն ժամանակ հարկավոր է լիովին ոգտադործել և հին կադրերը: Հին տեխնիկական կադրերի վորոշ բնկում է առաջ յեկել բանվոր դասակարգի հետ գործակցելու ուղղությամբ: Պետք է նրանց վերաբերյալ ավելի հոգատար և ուշադիր լինել և քաշել նրանց աշխատանքի:

Վերջապես, պե՛տ է ուժեղացնել մեր յերկրի ներքին միջոցների մոբիլիզացիան: Դրա համար անհրաժեշտ է վոչնչացնել անտեսազարթյունը, պետք ամենուրեք մտցնել տնտեսական հաշվարկը: Կառավարութեան և կուսակցութեան վերջին հրահանգները սեփական միջոցներով աշխատելու և հաշվարկն ավելի վճռականո՛ւ են իրագործելու մասին պետք է ամենակարճ ժամանակամիջոցում կինսագործել: Պետք է ուժեղացնել պայքարն ինքնարժեքի իջեցման համար, վոր հսկայական միջոցներ է խնայում մեր յերկրի ինդուստրացման համար: Իսկ դրա համար անհրաժեշտ է անընդհատ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և ռացիոնալացման յենթարկել արտադրական պրոցեսները:

Յերրորդ, վճռական տարվա պլանի մի շարք ճյուղերում թերակատարումը հիմնականում այս վերոհիշյալ պատճառներից է կախված: Այդ պատճառով հենց այսօր, անմիջապես անհրաժեշտ է ը. Ստալինի վերոհիշյալ բոլոր ցուցմունքները կենսագործելով, ապահովել հնգամյակի յերրորդ տարվա պլանի իրագործումը, հետևաբար և ապահովել ամբողջ հնգամյակի իրագործումը:

Պետք է լախորեն ծավալել սոցիալիստական մրցակցությունը և հարվածայնությունը և այդ ուղիով վրա փրկարել մեր բոլոր դժվարությունների հաղթահարման միջոցը: Աշխատանքի սոցիալիստական ձևերն արդեն ապացուցել են իրենց ուժն ու կարողությունը: Նրանք ցույց են տվել, թե ինչպիսի հրաշքներ կարող է գործել բանվոր դասակարգը, զինված լինելով այդ հզորագույն զենքով:

Մեր ապագա հաղթանակների հիմնական պայմանն է մտնում կուսակցութեան լենինյան գաղափարների հստակությունը: Այդ պատճառով պայքարը յերկու Ֆրոնտում, բոլոր ոպորտունիստական թեքումների դեմ, մանավանդ գլխավոր

վտանգ հանդիսացող աջ ոպորտունիզմի դեմ, չպետք է վոչ մի չափով թուլացվի հետագայում ևս:

Յե՛վ այսպես-ընդհանուր յեղրակացությունը 14-րդ տարեդարձի որն այն է, վոր կապիտալիզմը դլրվում է դեպի պատմութեան անդունդը, նա ապագա չունի: Իսկ մենք ամբողջ թափով սլանում ենք դեպի սոցիալիզմ: Բուրժուազիան խելակորույս խառնաշփոթի յե յինթարկված, իսկ մենք անվախ առաջ ենք դիմում: Մեզ հետ են նաև ամբողջ աշխարհի պրոլետարական մասսաները: Նրանք հիացքով հետևում են մեր ամեն մի հաղթանակին և պատրաստվում են իրենք ել անել այն, ինչ վոր արավ մեր պրոլետարիատը 14 տարի առաջ: Մեր հաջողությունները—ամբողջ աշխարհի պրոլետարիատի հաջողություններն են: Բուրժուազիան անշուշտ կաշխատի խեղդել սպառնացող հեղափոխությունը, ավելին՝ նա կաշխատի խեղդել նաև մեր յերկիրը: Սակայն միջազգային պրոլետարիատին մենք պետք է ցույց տանք, թե ինչպես պետք է դուրս գալ կապիտալիստական լծի տակից:

Դրա համար «մե՛ն պե՛տ է առաջ շարժվեն այնպես, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, նայելով մեզ, կարողանա ասել. ահա նա, իմ առաջավոր ջոկացը, ահա նա, իմ հարվածային բրիգադան, ահա նա, իմ բանվորական իշխանությունը, ահա նա, իմ հայրենիքը,—նրանք անում են իրենց գործը, մեր գործը, լավ ուշեմն,—աջակցենք նրանց ընդդեմ կապիտալիստներին յե՛վ հրահեւեն համաշխարհային հեղափոխության գործը» (ՍՍՍԽՆ):



За ответственного редак-
тора
А. Г. Авакиан
За техредактора
Р. Гюзальян

№ 67
1931

Сд. в набор 31/X—1931 г.
Сд. в печать 5/XI — 1931 г.
Объем 1¹/₁₆ печ. листа
Тираж 2000 экз.

Уполкрайлита № 4377. Газ.-кн. тип. СККПО. Статформат Б6 125x176. Заказ № 4796.
Гор. Ростов на Дону.

«Ազգային գրադարան»



NL0411639

ԳԻՆԵ Ե 15 ՀՈՊ.

Օ. Ս. 13. Օ.

32-1
ՍՏ
Цена 15 коп. 67

3045



На армянском языке

Т. ХАРАХАШИАН

ГОД ВЕЛИКИХ ПОБЕД

9(47).1917"

W-35

Сев.-Кав. Кр. отдел ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
„КРАЙНАЦИЗДАТ“